

3340

ԱԴՐԵՆԱԼԻՆ


ՈՐԵՆԻ ԿՐԵԱՑ

ФРЪНГ

Հ. ՊՕԴՈՒՄ Վ. ՑՈՎՆԱՆԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴԻ ՏԵ

ԵՐԿՐՈՒԴ ՏԵՂ



243

1993 - УЗ



ԱՍՏՈՒԾԱՍԵՐ ՄԱՆՈՒԿ

ՎԻՌՈՒ Հոգեւոր փափազգ տեսնելով ու աղօթասեր ըլլալդ իմանալով՝ կու տամ քեզի առ պղտիկ աղօթազիրքը, որ կարենաս սրտիդ փափազը լեցընել, դանելով անոր մշյը քեզի համար զանազան աղօթներ, ու անոնցմով քու ստեղծողիդ ու սիրական Յիսուսիդ հետ խօսակցելով :

Գիտնաս, սիրելիս, որ մանուկ Յիսուսը քու աղօթքդ աւելի սիրով կ'ընդունի քան թէ մեծ անձանց աղօթքը. ինչու որ քեզ աղօթքի մէջ տեսնելով՝ իր մանկու-

թիւնը միտքը կու դայ, որուն
մէջը մեծ եռանգով ու փափաղով
իր երկնաւոր Հօրը աղօթք կ'ըներ :
Ասոր համար ուրախութեամբ առ
առ աղօթագիրքը, ու սկսէ առառ
իրիկուն անկեց աղօթք ընելու քե-
զի, քու սիրելի ծնողացդ եւ ու-
րիշներուն համար :

Մի նայիր, սիրելիս, որ շատ ա-
ղօթք ընես, հասկա նայէ որ աղեկ
ու ջերմեռանդութեամբ ընես : Երբ
որ աղօթքիդ ատենը կու դայ՝ ծունկ
չողէ, միտքդ քու ստեղծողիդ ու
մէկ հատիկ սիրելոյդ Յիսուսին
վերցուր, ու անանկ աչքդ աղօթա-
գրքիդ վրայ ու միտքդ երկինքը՝
սկսէ փափաղով աղօթելու : Թէ
որ բերնովդ միայն աղօթք կ'ընես
կամ աղօթագիրքը կը կարդաս, ու
միտքդ քու Արարէիդ ու Փրկչիդ

չես վերցըներ, գիտցիր որ աղօթքդ
Աստուծոյ ընդունելի ու հաճոյ է :

Անանկ է նէ՝ աղօթէ մարով ու
աղօթէ բերնով, որ Յիսուս քեզի
համար ալ ըսէ, ինչպէս քանի մը
անմեղ տղոց համար ըսաւ . “Թող
տուէք որ առ աղաքը ինձի գան,
ինչու որ Աստուծոյ արքայութիւնը
առանկ աղոց համար է,, :

Աս բանս սրտանց փափառելով
քեզի՝ գրեցի առ փոքրիկ աղօթա-
գիրքը, ու կ'ուզեմ եւ կը խնդրեմ
Աստուծմէ՝ որ արժանի ըլլաս առ
աղօթագրքէն ան մէծ շահն ու-
նենալ՝ որուն համար տուի անիկա
քեզի :



Gebet der Kästnerin Wien.

Ա Թ Տ Ո Ւ Ա Ն

Ա Դ Օ Թ Ք Ս Ե Բ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ . ամէն :

Հայր մեր՝ որ յերկինս ես , սուրբ եղիցի անուն քո , եկեսցէ արքայութիւն քո , եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի : Զհաց մեր հանակազորդ տուր մեզ այսօր , եւ թող մեզ զակարտիս մեր , որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց , եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն , այլ փրկեա զմեզ ի չարե . զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս . ամէն :

Ողջոյն քեզ , Մարիամ , լի շնորհօք . Տեր ընդ քեզ , օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո Յիսուս : Սրբուհի Մարիամ , մայր Աստուծոյ , բարեխօսեա վասն մեր մեղաւորացո

այժմ եւ ի ժաման մահուան մերոց :
ամէն :

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Անկանիմք առաջի քո, Աստուածածին, եւ աղաչեմք զանարսան զլոյսդ : Բարեխօսեա վասն անձանց մերոց, եւ աղաչեա զմիածին Որդիդ : Փրկել զմեզ ի փորձութենէ, եւ յամենայն վասնդից մերոց :

Հաւատամք ի մի Աստուած, Հայրն ամենասկալ, արարիչն երկնի եւ երկրի, երեւելելեաց եւ աներեւութից : Եւ ի մի աէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուածոյ, ծնեալն յԱստուածոյ Հօրէ միածիննախ քան զամենայն յաւիտեանս : Աստուած յԱստուածոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուածոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած : Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ յերկրի, երեւելիք եւ աներեւոյթք : Որ յաղագո մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից

մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կա-
 տարելասլէս ի Մարիամայ սրբոյ
 կուսէն Հոգւովին սրբով։ Որով եւառ
 մարմնին, Հոգի, միտու եւ զամենայն՝
 որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ
 ոչ կարծեօք։ Չարչարեալ, խա-
 չեալ, թաղեալ, յերրորդ աւուր
 յարուցեալ, ելեալ յերկինս նովին
 մարմնովին՝ նատաւ ընդ աջմէ Հօր։
 Գալոց ենովին մարմնովին եւ փառօք
 Հօր ի դատել զիենդանիս եւ զմե-
 ռեալս. որոյ թագաւորութեաննէ
 ոչ դոյ վախճան։ Հաւաստամք եւ ի
 սուրբ Հոգին յանեղն եւ ի կատա-
 րեալն, որ ի Հօրէ եւ յՈրդւոյ ըղխի.
 որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարդարես
 եւ յաւետարանս. որ Ե՞ն ի Յոր-
 դանան, քարողեաց զԱռարեալն,
 եւ բնակեցաւ ի սուրբան։ Հա-
 ւաստամք եւ ի մի միայն յընդհան-
 րական եւ յառարելական սուրբ
 եկեղեցի։ Ի մի մկրտութիւն, յա-
 պաշխարութիւն, ի քաւութիւն եւ
 ի թռողութիւն մեղաց։ Ի յարութիւն
 մեռելոց։ Ի դատաստանան յաւի-
 տենից Հոգւոց եւ մարմնոց։ Յար-

քայութիւն երկնից : Եւ ի կեանան
յաւիտենականս . ամէն :

Ա Դ Օ Թ Ք

Առաջանց , վեճը , ու երեխանը
պաշտու :

^{*} բեշտակ Տեսոն աւետեաց կու-
սին Մարիամու եւ յդացաւ ի Հո-
գույն սրբոյ : Ողջոյն քեզ :

Ահաւասիկ կամ աղախին Տեսոն
զիցի բնձ ըստ բանի քում : Ող-
ջոյն քեզ :

Եւ Բանն մարմին եղեւ եւ բնա-
կեաց ի մեզ : Ողջոյն քեզ :

Զնորհսքո , աղաչեմք , Տէր , Հեղ
ի միտս մեր , զի որ աւետեօք Հրեշ-
տակին ծանեաք զմարդեղութիւն
Քրիստոսի որդւոյ քո , շարչարա-
նօք նորին եւ խաչիւ ժամանեցուք
ի փառս յարութեան , Տերամլ մե-
րով Յիսուսիւ Քրիստոսիւ . ամէն :

Ա Դ Օ Թ Ք

Շնորհակալութեան :

Դմ սիրելի Աստուածո , որ զիս քու-
սմէնակարող ուժովդ ստեղծեցիր ,

ինծի կեանք, հոգի ու մարմին տուիր
 ու ինչուան հիմա զիս ամէն փոր-
 ձանքներէն պահելով ասօրս ալ հա-
 սուցիր, ահա հիմա քնէս դիշերուան
 հանգիստէս արթըննալով քու առ-
 ջիդ կ'իյնամ ինտոր որ անարժան
 ու անպիտան ծառայ մը իր տիրո-
 ջը առջեւը կ'իյնայ, ու բոլոր սրտէս
 չնորհակալ կ'ըլլամ քեզի, որ զիս
 արժանի ըրիր ասօրուան լոյսն ալ
 տեսնելու, ասօրս ալ քեզի իմ ան-
 արժան ըերնովա աղօթք ընելու,
 զքեզ զովելու ու օրհնելու: Իմ
 հասակակիցներուս քանիները երեկ
 իրիկուն քնանալու գացին, ու աս
 տոտու կամ մեռած գտնուեցան ի-
 րենց անկողնին մէջը, կամ ծանր
 հիւանդանալով չեն կրնար ելլել:
 իսկ ես ահա կենդանի ողջ ա-
 սոսող արթնցայ ելայ, ու իմ առ-
 տուան աղօթքս առողջութեամբ
 քեզի կը մատուցանեմ: Ասուած
 իմ ամենասիրելի, ես զեռ իմ աս
 պզտիկ հասակիս՝ քիչ տարեկան
 կեանքիս մէջը՝ քեզի սյսչափ քիչ
 ծառայութիւն ըրի, զքեզ քիչ

սիրեցի, ու գուն ինձի այսուտի ա-
զեկութիւնները ըստիր ու կ'ընես զի-
շեր ու ցորեկ. ինչպէս որ առ զի-
շերս ալ զիս ամեն տեսակ կիշեր-
ուան փորձանքներէն պահելով առ
առառուան հասուցիր: Ասանկ հայ-
րական մեծ սիրոյդ համար քեզի
ուրիշ բան չեմ կրնար ընել, ըստյ
եթէ քու առջիդ իյնալ, ու քեզի
սրտանց շնորհակալ ըլլալէս եռեւ
խստանալ որ առ օրս, ինչպէս
նաև իմ բոլոր կեանիքիս մշն
ալ մորովս, խօսրովս ու գործքովս
մինակ քեզի պիտի ծառայեմ, զքեզ
պիտի սիրեմ, քու սուրբ կամքդ,
պատուիրաններդ, ապասրանքներդ
լման կատարելու պիտի աշխա-
տիմ. ինչ կ'ընեմ, ինչ կը սորվիմ
նէ՝ քուին փառքիդ, քեզ վա-
ռաւորելու ու գովելու համար պի-
տի ընեմ. ու իմ եղբայրներուս,
քրուրտոցս, հասակակիցներուս ու
աշակերտակիցներուս ալ ասանկ
ընել պիտի սորվեցընեմ: Սիրելի
Աստուածս, իմ երկնաւոր հայրս
ու տէրս, որդիական համարձակու-

թեամբ կ'ազաշեմ քեզի որ ինձի
առ օրս առաս չնորհք ասս՝ իմ
գործքերովս քու կամքդ կատարե-
լու, զքեզ ամեն բանէն աւելի սի-
րելու ու առանց մեղքի անցընե-
լու առ օրը, որուն մէջը քու ան-
համար պարզեւներդ պիտի վայե-
լեմ, ինչպէս որ կը յուսամ . ա-
մէն :

ԱԴՅՈՒԹԻ

Սուրբ հաւատոց չնորհը ինդրելո-
համար :

Ամենակարող, ամենասիրելի Աս-
տուածս, Հայր, Որդի ու Սուրբ Հո-
գի, ամենասուրբ Երրորդութիւն,
որ զիս ոչընչէն՝ ոչ բանէ մը ստեղ-
ծեցիր, չար սատանային ձեռքէն
ազատեցիր, ու չնորհքովդ մեղքեն
սրբեցիր. ինչչափ շատ չնորհա-
կալութիւն մասուցանելու պար-
տական եմ քեզի՝ որ իմ անար-
ժանութեանս չնայելով զիս սուրբ
Հաւատորի մէջ ստեղծեցիր, ու
դեռ աս պզտիկ Հասակիս մէջը
ինձի այնչափ չնորհք տուիր՝ որ

աս սուրբ Հաւատը սորվիմ ու
 կարենամ ըսել, թէ կը հաւտամ
 քեզի, մէկ Աստուած, Հոյր, Որ-
 դի ու սուրբ Հոգի, ամենասուրբ
 Երրորդութիւն, կը հաւտամ որ
 Որդիդ Աստուած աշխարհք եկար,
 ինձի համար մարդ եղար ու խա-
 չին վրայ մեռնելով զիս յաւիտե-
 նական մահուանէ ազատեցիր. կը
 հաւտամ որ քու զօրաւոր շնոր-
 քովդ կրնամ ամեն իժիր քու
 կամքդ կատարել. ու կը հաւտամ
 որ իմ մարմինս մեռնելէն ետքը
 Հոգիս շիմեռնիր՝ անմահ կը մնայ,
 քու դատաստանդ կու դայ, թէ
 որ աղել գործքեր ունի նէ՝ քեզմէ
 յաւիտենական վարձք կ'առնէ, ար-
 քայութիւն կ'երթայ, Հապա թէ
 գէշ գործքեր ունի՝ յաւիտենական
 պատիժ կ'առնէ, դժոխք կ'երթայ:
 Ո՛վ սիրելի Աստուած իմ, շնորհք
 տուր ինձի, որ աս սուրբ Հաւատը
 միշտ պահեմ սրտիս մէջը ու բեր-
 նովս ալ զրուցեմ. շնորհք տուր ին-
 ձի, որ աս քրիստոնէական սուրբ
 Հաւատոյ ուսմունքը կամ քրիստո-

նեական վարդապետութիւնը սի-
րով ու մեծ ջանքով սորզիմ, դա-
ստան ու եկեղեցւոյ մէջ, ու սոր-
զաձներս ալ միտքս պահեմ, ան-
հազութեամբ չմոռնամ։ Ընորհը
տուր ինձի, որ սորզած հաւատ-
քիս ուսմունքին համաձայն ապ-
րիմ, ճշմարիտ ուղղափառ քրիս-
տոնէի զաւակ ըլլալո ամէն տեղ
գործքով ցուցընեմ, որ անհա-
ւատներն ալ զիս ու իմ գործքերս
տեսնելով՝ քու սուրբ հաւատք
գովեն, սրտերնին քրիստոնէու-
թեան վրայ սէր իյնայ ու դառ-
նան քու սքանչելի հաւատք ըն-
դունին, որ ասանկ դուն Աստուած
իմ, Հայր, Որդի ու սուրբ Հոգի,
ամենասուրբ Երրորդութիւն, ա-
մենէն փառաւորուիս յաւիտեանս
յաւիտենից . ամէն :

ԱԴՅԹԻՔ

Հասկադ յառաջ շնորհել ինդրել-
համեր :

Վանաքարերաբաժնամին աղեկու-
թիւնը ու տօնութեած իմ,

ՀԱԽ-ССР :

Ա. Ա. ՄԱՏԻԿԻՆ
ԱՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆԴՐԵ

երբ որ մաքովս կը մտածեմ քու ա-
 մէն ըրածներդ, ու աչքովս շորս
 դին կը նայիմ՝ ուրիշ բան չեմ գրա-
 ներ, ուրիշ բան չեմ տեսներ՝ թէ
 չէ ցեղ ցեղ բարիք, ցեղ ցեղ պար-
 զեւներ, որ դուն հայրական սիրով
 մեզի տուեր ես ու ամեն իմիր կու
 տաս : Քու այսովիսի բարերարու-
 թիւններդ տեսնելով ու քու ամե-
 նակարող զօրութիւնդ ալ մտածե-
 լով՝ կը յուսամ հաստատ մոքով,
 որ ինձի ամեն հարկաւոր բաները
 թէ՛ իմ հոգւոյս ու թէ՛ մարմնոյս
 համար միշտ կ'ուզես տալ : Գի-
 տեմ ու հաստատ կը յուսամ որ
 իմ հոգիես քուկին սուրբ շնորհքո-
 պակաս չես ըներ, որով միայն
 կրնամ բարի դորձքեր ընել ու
 քեզի ծառայել : Կաեւ հաստատ
 յոյս ունիմ՝ որ ինձի ու ամենուն
 պիտի տաս քու բարերար կամօրդ
 ինչ որ մարմնոյն առողջութեանը
 համար հարկաւոր է, որովէս զի ան-
 փորձ մնալով՝ քեզ բերնով ու ա-
 մեն զգայաբանքներով օրհնենք :
 Աս հաստատ ու անսարակուսելի

յոյսը միշտ սրտիս մէջը ունենալու
համար մինակ քու շնորհքդ կրնայ
ինձի օգնել : Անոր համար այսօր
որդիական համարձակութեամբ
քու առջիդ ծունկ չուգած՝ կ'աղա-
շեմ քեզի, ամենասիրելի՛ ու ա-
մենակարող Աստուած իմ, որ քու
ամենակարող զօրութեանդ վրայ
ունեցած յոյսս աւելցընես ու ամ-
բացընես : Թող մի տար որ մարիս
մէջը տարակոյս մը իյնայ քու մեզի
խոստացած ու պատրաստած բա-
րիքներուդ վրայ, հապա շնորհք
տուր որ հաստատ յուսով խընդ-
րեմ ու սպասեմ քու ամենազութ-
ողորմութենեդ զանոնիք ընդու-
նելու ու երկնից արքայութեանը
հասնելու, ուր օրհնեմ ու փառա-
բանեմ զքեզ յաւիտեանս յաւի-
տենից . ամեն :

ԱԴՅԱՔ

Ասպատակին սիրոյ շնորհութե-
լու համար :

Կամէն բանեն վեր ու ամեն բանեն
աւելի սիրելի ու ամենաբարի Աս-

տուածիմ, սրտիս ու հոգւոյս ցանելալի ու մէկ հատիկ բարեկամն ու բարերարը, որ ինձի ալես անարժանը քու անթիւ բարերարութիւններովդ զարդարելով՝ վրաս ունեցած մէծ սէրդ յայտնի ցուցուցիր, իրաւցընեւ անարժան կ'ըլլացի արեւուն լոյսը տեսնելու, մարդկանց մէջը երեւնալու ու աշխարհքիս վրայ ասլրելու, թէ որ սկզնթարթմը զքեզ չսիրեի ու սրտես քու սուրբ սէրդ հանեի կամ պակստցընեի : Ամենասիրելի՛ Աստված իմ, զիս պատժե ինչ պատժով որ կ'ուզես, միայն առ մէծ ու սոսկալի պատիժը մի տար ինձի որ քու սէրդ կորսընցընեմ կամ զքեզ չսիրեմ : Հոգւոյս մէկ հատիկ բարեկամը, իրաւցընեւ բոլոր սրտանց, բոլոր ուժովս, ամեն բանեն վեր կը սիրեմ զքեզ . բայց անով ալ կը վախնամ կը դոզամ որ չըլլաց թէ քու սէրեդ իյնամ, քու սէրդ հովիսայ ու պաղի սրտիս մէջը, աշխարհքիս մէջը քեզմէ աւելի բան մը սիրեմ : Առ վախս սրտիս մէջը ունենալով՝

թեպէտ հաստատ միաքս դրած եմ
որ հազար հեղ մեռնիմ ու կոսր
կտոր ըլլամ, քան թե զքեզ վայր-
կեան մը չսիրեմ, բայց բոլոր սրտես
կը խնդրեմ որ զիս Հոգւոյն սրբոյ
Հորհքովն ու զօրութեամբը լե-
ցընես, որ զքեզ օրե օր աւելի սի-
րեմ. քանի որ հասակով ու տա-
րիքով կը մեծնամ՝ այնչափ ու հա-
զար հեղ ալ աւելի քու սիրոյդ մե-
ջը մեծնամ ու զօրանամ. զքեզ սի-
րեմ եկեղեցւոյ ու գաստան մեջ,
տունը ու ճամբու վրայ, արթուն
եղած ժամանակս ու քնոյ մեջ, դի-
շեր ու ցորեկ, ամեն բողէ ու ամեն
տեղ, ինչուան որ ետքի շունչս ալ
քու սիրոյդ մեջը տալով՝ ան սիրով
լուած զամ արքայութիւնը զքեզ
յաւիտեանս յաւիտենից հրեշտակ-
ներուն ու սուրբերուն հետ սիրե-
լու. ամեն :

ԱՆՕԹԻ

Անցած մեղքերուն նողութիւն խընդ-
րէլս ու նոր մեղքերէն պահուե-
լու համար :

Կազումողնրմ ու մարդասէր Աս-
տուած իմ, առասւան լոյսը աչքիս
ծագած ժամանակը՝ քու շնորհքիդ
ու ողորմութեանդ լոյսը միտքս
կը լուսաւորէ ու կը աեսնեմ
հոգւոյս ազան ու վերքերը՝ որ են
ցեղ ցեղ մեղքեր, որոնք քու սուրբ
կամքիդ ու պատուիրաններուդ
դէմ գործեր եմ : Դուն զիս քրիս-
տոնէի զաւակ ըրիր, ինձի ամեն
աեսակ ըարիքներ տուիր, ու հո-
գիս սատանային ձեռքեն ազա-
տեցիր . ու ես այսշափ բարիքնե-
րու դէմ քեզի իմ մեղքերովս շա-
րիք հաստուցի : Գեշ խորհուրդնե-
րովս, խօսքերովս ու գործքերովս
զքեզ սրդողուցի, շնորհքդ կոր-
սընցուցի, քեզմէ հեռացայ : Վայ
ինձ, հազար հեղ վայ ինձ, Տեր
իմ, որ ասանկ ապերախտ եղայ
քեզի : Վայ ինձ, ինչո՞ւ քեզի ոլես

սիրելի Աստուածու ու Հայրս թու-
 ղուցի, զքեզ չսիրեցի, Հապա մեղ-
 քը՝ քու չուզած ու չսիրած բանդ
 ուզեցի ու սիրեցի. քեզի որդի
 ըլլալու տեղ թշնամի եղայ: Բայց,
 Տէր իմ ու Աստուած իմ, քու
 զօրաւոր շնորհքովդ իմ այսակիսի
 ողորմելի վիճակս տեսնելով՝ այսօր
 երեսիս վրայ գետինն ինկած ու
 լացով ողբով՝ սրտանց ցաւելով
 իմ մեղքերուս վրայ քեզմէ, քու
 Հայրական սրտեդ թողութիւն կը
 խնդրեմ: Դարձուր, Տէր, ինձի
 նորէն ան շնորհքը զոր մեղքովս
 կորսընցուցի. զիս նորէն քու սիրե-
 լի զաւկըներուդ ու ծառաներուդ
 մէջը առ, որոնցմէ մեղքովս ու գեշ
 գործքերովս զատուեցայ: Աւել-
 ցուր իմ սրտիս ցաւը՝ ըրած մեղ-
 քերուս վրայ, որոնցմով քու
 շնորհքդ կորսընցուցի. միայն թէ
 նոյն շնորհքը ետ գարձընելով՝ տուր
 ինձի ան ուրախութիւնը՝ զոր ու-
 նին անմեղներն ու արդարները:
 Հաստատե զիս աս սուրբ ու Հզօր
 շնորհքովդ, որ բոլոր ուժովս մեղ-

քեն վախչիմ . քու հայրական
աշքդ ու օգնութիւնդ ամեն իժիք
վրաս ըլլայ , որ սոսպինութեան
ճամբէն դուրս չելլեմ ու մեղաց
աղաբին մէջ չիյնամ : Պահէ դիս ,
ողորմած Աստուած իմ , ան սուրբ
աղոց մէջը՝ որոնք քեզի կատարեալ
սոսպինութեամբ ու սրբութեամբ
սրտանց կը ծառայեն , դքեզ կը
սիրեն ու քու առջիդ անուշահոտ
աղուոր ծաղիկներու պէս քաղցր
հոտ կու տան իրենց բարի դործ-
քերովը . որ ետքն ալանանց հետ
արբայութեան մէջը քեզ դովեմ
ու օրհնեմ յաւիտեանս յաւի-
տենից . ամեն :

ԱԴՅՈՒԹԻ

Սուրբ իսյա Աստուածածինեն իրեն
հաջը բարեխօսութեանը ինդրելու-
համար :

Ամենօրհնեալ ու ամենասուրբ
կոյս Մարիամ , իմ հոգւոյս վըրկ-
չին մայրը , մարդկան հզօր բարե-
խօսը , մեղաւորիներուն յոյսն ու

սրդարներուն խնդութեան պատ-
 ճառը, ահա այսօր ես քու սիրելի
 Որդւոյդ մեծ ողորմութեամբն ու
 շնորհքով իմ հաւատքս, յոսսու
 սէրս Արտօնիս ու Փրկչիս յայտնե-
 լէս ետեւ կ'իյնամբ քու առջիդ ալ,
 առաջ բոլոր սրտես շնորհակալ
 կ'ըլլամբ, որ զիս աս գիշեր քու
 մայրական պահպանութեամբ ա-
 մէն փորձանքներէն պահեցիր, ու
 ետքը երկու բան կը խնդրեմ քեզ-
 մէ: Մէջ մը կը խնդրեմ, սուրբ
 կոյս Աստուածամայր, որ իմ սրտիս
 մէջը քու Աստուածորդոյդ Յի-
 սուսին սէրն աւելլորնես, մեծցընես
 ու անանկ բորբոքես, որ աշխարհ-
 քիս վրայ ուրիշ բանի սէր շնդեմ.
 ամէն բանի մէջ քու մէկ հասիկ
 Որդիդ ու իմ հոգւոյս Փրկիչն
 ու բարերարը սիրեմ, ու ամէն
 բան իրեն սիրոյն համար ընեմ:
 Երկրորդ կը խնդրեմ քեզմէ, ամե-
 նասիրելի մայր իմ կոյս Մարիամ,
 որ իմ սիրտս Յիսուսին սիրովը
 բորբոքելէն, լեցընելէն ետքը՝ քու
 սէրդ ալ առատութեամբ տաս

ինծի, որ քու Աստուածորդիեղ
 ետեւ զքեզ սիրեմ իրրեւ իմ Փըրկ-
 չիս մայրը, ու իրրեւ իմ բարե-
 խօսս ու մայրս։ Առ ինծի Յիսու-
 սեն շնորհք, որ զքեզ առ իմ
 աղայութեանս ժամանակը անանկ
 սիրեմ՝ ինչպէս որ ինքը Յիսուս
 զքեզ իրեն մանկութեան ատեն
 ու բոլոր կեանքին մեջը սիրեց։
 Գիտեմ, սուրբ կոյս Աստուա-
 ծածին, որ երբ որ անմեղ, ա-
 ռաքինի ու աստուածասեր աղաք
 կը տեսնես, քու ամենասիրելի Որ-
 դւոյդ Յիսուսին մանկութիւնն
 ու պատանեկութիւնը միտքդ դա-
 լով՝ մեծ խնտում կ'ունենաս, ու
 անոր համար ալ անանկ աղաքը ա-
 ւելի կը սիրես ու քու մայրական
 օրհնութիւնդ իրենց վրայ կ'աւել-
 ցընես։ Աս զիսնալով ես ալ քու
 առջիդ ինկած կը խնդրեմ քեզ-
 մե, որ իմ վրայէս քու մայրա-
 կան աչքդ ու անով քու Որդւոյդ
 շնորհքը չվերցընես, որ ես ալ
 ասանկ առաքինի աղայ մը ըլլամ,
 բոլոր ուժովս մեղքեն փախչիմ,

գեշ ընկերներու հետ չապրիմ ,
հասպա բարի տղոց հետ քու սի-
րելի Որդւոյդ ու քեզի ծառայեմ ,
ու արժանի գտնուիմ քու մայ-
րական օրհնութիւնդ ամեն իժիր
ընդունելու . ամեն :

ԱԴՅԹԻՔ

Պահապան հրեշտակին օգնութեանը
խորելու համար :

Առորբ հրեշտակ Աստուծոյ , որ
իմ սիրելի Արարշես վրաս պահա-
պան ու պաշտպան գրուեր ես ,
զիս ամեն փորձանքներեն պահե-
լու ու ինծի օգնելու համար , որ
զԱստուծ սիրեմ , հոգւոյս փրր-
կութիւնը հոգամ , ու արքայու-
թեան ճամբուն վրայ քալեմ . սրբ-
տանց շնորհակալ կ'ըլլամ քեզի մին-
չեւ հիմա վրաս ցուցուցած երախ-
տեացդ ու պաշտպանութեանդ հա-
մար : Դուն մինչուկ հիմա իբրեւ
թէ իմ ձեռքես բռնելով զիս մեղքի
վտանգներեն ու գեշ ընկերներեն
հեռացուցիր , քրիստոնեի զաւակ

ըլլալու ցուցընելու օպնեցիր, ու
 Աստուծմէ ինձի շնորհը առիր, որ
 կարող ըլլամ քու ձայնդ ու ներ-
 քին խրատներդ մտիկ ընել ու
 անմեղ տսլրիլ: Թե՛ որ չար սատա-
 նան՝ իմ հոգւոյս թշնամին, գեշ
 ընկերներն ու ուրիշ փորձանքներ
 զիս մեղքի մշջ ձգելու ու արքայու-
 թեան ճամբէն զուրս հանելու կ'աշ-
 խատին, գուն օգնե ինձի, իմ սուրբ
 պահապանու, որ անոնց գեմ կե-
 նամ ու հոգւոյս զեն չհասցընեմ:
 Սուրբ եկեղեցւոյ մշջը օգնե ինձի,
 որ միաքան Աստուծոյ տալով ու
 սուրբ սրտով աղօթք ընեմ, պա-
 տարագ տեսնեմ, ու քարոզը, բա-
 րի խրատները աղեկ մտադրու-
 թեամբ լսեմ: Դասատան մշջ օգնե
 ինձի, որ քրիստոնէական վարդա-
 պետութիւնը եւ ուրիշ օգտակար
 ուսմունքը յաջողութեամբ, սիրով
 ու փութով սորզիմ, մշներուս
 հնազանդ ըլլամ, իրենց բարի
 խրատներէն ու պատուերքներէն
 զուրս չելլեմ: Շնորհը առ ինձի
 Յիսուսնի, որ առաքինի վարդով

մեծնամ, բարի ու սուրբ անձ ըլ-
լամ, ու երբ որ իմ Աստուածս
ինձի մահ կը խաւրէ, դուն զիս մա-
հուանս ժամանակը իմ Հոգւոյս
թշնամիներուն ձեռքէն պահելով
ընկերացիր անոր, ու տար Հոգիս
արքայութիւն, ուրքեզի հետ զԱռ-
ուուած օրհնեմ եւ ուրախանամ.
ամէն :

ԱԴՅԹԻ

Ուսում սորվելու իմ սուրէլ հոգեցի
ախելէն առաջ :

Սիրելի Աստուած իմ, որ զիս
ստեղծեցիր, խօսքով ու գործքով
քեզի ծառայելու համար, ու չես
ուզեր որ օր մը, ժամ մը զուր
սնցընեմ, հասպա կ'ուզես ու կ'ա-
ռլըսպրես որ խելքս բացուելէն
ետքը՝ պղափիկուց սկսիմ քու սուրբ
հաւատրիդ ուսմունքը, Հոգւոյս եւ
մարմնոյս հարկաւոր եղած բաները
փութով սորվելու ու կատարելու.
կ'աղաչեմ քեզի, որ ինչպէս զիս
առ առառ առաջութեան մեջ

արթնցուցիր ու արեգական լու-
 սովը մարմնոյս աչուրները լու-
 սաւորեցիր, այնպէս ու շնորհքիդ
 ուժովն ու լուսովը միտքս բանաս
 ու լուսաւորես, որ Հարկաւոր ուս-
 մունքս, մանաւանդ քրիստոնէա-
 կան վարդասլետութիւնն ու հո-
 գեւոր խրատները սիրով ու յաջո-
 ղութեամբ սորվիմ ու միտքս պա-
 հեմ: Գիտեմ, ամենակարող Աս-
 տուած իմ, որ Եթէ քու շնորհքդ
 ու լոյսդ ինձի օդնութեան չիհաս-
 նիր ու իմ միտքս չիլուսաւորեր նէ,
 պարասլ կ'աշխատիմ աղէկ բան
 մը սորվելու ու միտքս պահելու
 ու անոնց Համաձայն ապրելու-
 անոր Համար տուր ինձի այսօր սս
 սուրբ շնորհքն ու լոյսը որ վար-
 ժապետներուս սորվեցուցած ուս-
 մունքն ու գրքերէն կարդացած բա-
 րի խրատներս գործքով կատարեմ:
 Արժանի ըրէ զիս քու ամենազօր
 շնորհքովդ իմ Փրկչիս՝ Յիսուսին
 նմանելու, որուն Համար սուրբ
 Աւետարանը կ'ըսէ. Մանուկն Յի-
 սուս կը մեծնար ու առաջ կ'եր-

թար իմաստութեամբ ու տարի-
քով . որ ես ալ մանուկ Յիսու-
սին պէս քեզի սիրելի ըլլամ : Պա-
հէ զիս ծուլութենէ , որ պարապ
կենալով մեծ մեղքերու մշջ չիյ-
նամ . տուր ինձի սէր ու փոյժ
ամեն աղէկ բաները սորվելու ու
ընելու , եւ յաւիտենական կենաց
համար արդիւնք պատրաստելու
ու արքայութեան մշջը վայելելու
ի փառս քո . ամեն :

ԱՂՕԹՔ

Քննութիւն ընելուն առաջ :

Եկաւ հաստ քննութիւն ընե-
լու օրս , որ իմ յառաջադիմու-
թիւնս թէ՛ ուսման ու թէ՛ աս-
տուածալաշտութեան մշջ ցուցը-
նեմ : Տէ՛ր , դուն զիս զօրացուր , որ
առանց վախնալու կարող ըլլամ
հարցմաւնքներուն պատասխանը
տալ : Քննութենէ աղէկ ելլելու մեծ
յոյս տուողը ինձի աս է , որ մինչեւ
հիմա ուսման աղէկ փոյժ տարի ,
եւ պիտեմ որ դուն թող չես

տար, Տէր, որ մէկը ինչպես որ
պէտք է նէ պատրաստուած ըլլայ,
ու իր բաղձանացը շհամնի: Եւ
չըլլայ որ առ գժբախտութիւնը իմ
զլուխս դայ, սրտանց հիմայ քեզի
կ'աղաշեմ. բայց չէ թէ իմ կամքս՝
այլ քու կամքդ ըլլայ: Ամենեն
առաջ գուն զիս փորձէ ու քննէ,
Աստուած իմ. իմացիր իմ սիրոս,
հարցուր, ու բոլոր իմ ճամբաս
զիացիր, ու աևս թէ որ անօրեւ-
նութիւն մը իմ վրաս կը գտնուի՝
ուղղէ ու յաւիտենական ճամբան
ինծի առաջնորդէ. ամեն:

Թէ՞ ո՞ ժննութենէն աղեմ ելլե:

Տէր Աստուած իմ, շնորհակալ
եմ, որ իմ քննութիւնս ինչպես
որ կը բաղձայի այնպես եղաւ: Քա-
նի հոգի ընկերներէս աս շնորհ-
քը չունենալով հիմայ շեն ուրա-
խանար: Բայց քեզի միայն կը վա-
յելէ վառք ու պատիւ: Քաւ լիցի,
որ ուրիշն վրայ հպարտանամ,

վասն զի ի՞նչ ունիմ որ քեզմե առած
 չըլլամ, ու թէ որ ամեն բան քեզ-
 մե է նէ, ի՞նչ բանի համար պիտի
 հպարտանամ շառածի մը սղէս:
 Տուր, Տէր, որ դասը սկսելու առե-
 նը նոր զօրութեամբ մը չէ թէ մի-
 այն ուսման հազա՞նու աստուած-
 պաշտութեան ետեւեն իյնամ:
 Վասն զի ի՞նչ օգուտ ունի պարզ
 դիտութիւնը՝ որն որ կը հպար-
 տացընէ, չունենալով սէրը՝ որ կը
 չինէ: Տուր որ խիզճմտանքս բարի
 գործքերուս վրայ վկայէ, որ իմ
 կենացս վերջի ըռալէն, երբ որ իմ
 խորհուրդս, խօսրս ու գործքս պի-
 տի քննես, քեզ կարող ըլլամ
 գտնել, ու լսել քու բերնեղ թէ
 "Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատա-
 րիմ, որովհետեւ ի սակաւող հա-
 ւատարիմ եղեր, ի վերայ բազ-
 մաց կացուցից զքեզ, մուտ յու-
 րախութիւն Տեսան քո,,:



Ե Ր Ե Կ Ո Ւ Ա Ն

ԱՂՕԹԻՔՆԵՐ

ԱՂՕԹԻՔ

Ընորհակալութեան բուլոր օրուան մէ-
լը ըստ բարիքներուն ու ընորհին
համար :

Տե՛ր Աստուած իմ, Հոգւոյս ու
մարմնոյս ամենողորմած բարերարը,
երբ որ քու ինձի պէս անարժան
մեղաւորին աս օրսցուցուցած հայ-
րական սերդ, ըրած բարերարու-
թիւններդ ու տուած շնորհըններդ
կը մտածեմ նէ, միտքս կը շփոթի
ու բերանս խօսք չիդանուիր որ
կարենամ քեզի անոնց համար
շնորհակալութիւն ընել : Կը խոս-
ովանիմ որ մինակ քու հայրական
բարութիւնդ պահեց զիս այսօր
ցեղ ցեղ հոգեւոր ու մարմնաւոր
վոանդներէն, որոնցմավ կրնայի

թէ' առ աշխարհքիս մէջ ու թէ'
 անդիի աշխարհքը ողորմելի ըլլալ :
 Մինակ քու հզօր ձեռքդ պահեց
 զիս այսօր ամէն տեսակ հիւանդու-
 թիւններէն, ցաւերէն ու յանկար-
 ծական մահւընէ : Հիմա ասանկ ու
 սյսչափ բարերարութիւններուդ
 ու պարզեւներուդ համար բոլոր
 սրտէս, բոլոր ուժովս շնորհակալ
 կ'ըլլամ քեզի, ամենասիրելի՛ Աս-
 տուած իմ: Բոլոր կենացս մէջը
 ոչ օր մ'ալ, ոչ ակնթարթ մ'ալ
 կ'ուզեմ մոռնալ քու ինծի ըրած
 անհամար աղեկութիւններդ: Որ-
 շափ որ տարիքով կը մեծնամ՝
 սյնչափ ալ պիտի աշխատիմ քեզի
 աւելի սիրով ու եռանդով ծա-
 ռայելու, որ կարենամ ասանկով
 արժանաւոր շնորհակալութիւն ը-
 նել քեզի քու երախտեացդ հա-
 մար: Ու դիանալով որ անմեղու-
 թեամբ ապրիլն ու բարի գործքեր
 ընելլ քեզի ամենէն աւելի սիրելի
 շնորհակալութիւն է, կը խոստա-
 նամ բոլոր սրտէս՝ ասկից ետեւ
 աշխատելու ինչչափ որ կը կարե-

նամ՝ քեզի ասանկ շնորհակալութիւն ընելու եւ քեզի սիրելի ըլլալու . ամէն :

ԱԴՅԹԻ

ՄԵՂԱԿ ԱԿԱՆ-ԱՀԵ-ՀԱՐՐԵԼ-ՀԱԲԱՐ :

ՏԵՇ Աստուած իմ, ահա կենացս օրերուն մեկ յորեկն ալ անցաւ, ու աս իրիկուանս համելով՝ ըրած գործքերս կը քննեմ կը տեսնեմ որ այսօրս քեզի այնովէս աղեկ չծառայեցի՝ ինչպէս որ առաւօտուն խօսք տուեր ու միտքս դրեր եի : Վայ ինձի, որ ասշափ տկար գըտնուեցայ՝ չկրնալով մեկ օր մ'ալ քեզի աղեկ ծառայութիւն ընել, առանց մեզքի ասլրիլ ու սուրբերուն նման ըլլալ : Բայց ահա աս իրիկունս բոլոր սրառվս ու հոգւովս ցաւելով աս օրուան ըրած մեղքերուս համար քեզմե թողութիւն կը ինդրեմ սիրելի՝ Աստուած իմ, ներե ինձի աս հեղուսդ ալ, գարձուր քու երեսդ իմ մեզքերես,

մի յիշեր իմ գէշ գործքերս՝ որոնց-
 մով զքեզ իմ ամենաբարի տէրս
 սրդողուցի : Մի նայիր, սիրական
 Աստուած իմ, այս օրուան ըրած
 մեղքերուս, հապա նայէ սրտիս հի-
 մակուան ցաւին ու զջջումն ու
 աչացս արցունքին՝ որով քեզմէ-
 թողութիւն կը խնդրեմ : Ողորմէ-
 իմ մեղաւոր հոգւոյս, ու անոր
 մեղքերուն թողութիւն առլով՝
 ուրախացուք զինքը երկնաւոր խըն-
 դութեամբ : Տէր իմ, հաստատ
 կը խոստանամ քեզի որ աս օրս
 եաքի օրը պիտի ըլլայ, որուն մէջը
 զքեզ իմ մեղքերովս սրդողու-
 թի, ասկից ետքը միտքս, խօսրս
 ու գործքս մինակ քեզի ծառայել
 պիտի ըլլայ : Դուն ալ, Տէր իմ,
 աս իրիկուն իմ աս պատրաստու-
 թիւնս տեսնելով անցած մեղ-
 քերուս թողութիւն ըրեւ, ու զիս
 քու սիրելի զաւկըներուդ՝ սուրբ
 ողոյ մէջը առ, որոնց հետ կը փա-
 փազիմ ահմեղութեամբ իմ կեանքս
 անցընել . ամեն :

ԱԴՐԻՔ

ԳԵՂԵՐԱԿԱՆ ՔԱՐՅԱԿԻՆԵՐԵՆ պահուել-
լու համար :

Խմ սիրելի՛ ու ամենողորմ հայրս
ու Աստուածս, որ իս ինչուան հի-
մայ հայրական դժուժեամբզ ամեն
փորձանքներեն պահեցիր ու ամեն
իժիր քու հայրական աչքու ու
ողորմութիւնդ իմ վրայէս պակաս
չես ըներ, ահա աս պահու քու-
կին հրամանովդ քունի երթալով՝
քու առջիդ կ'իյնամ ու կ'աղաշեմ
քեզի որդիական սրտով, որ աս
գիշեր ալ իմ վրայէս քու հայ-
րական ողորմութիւնդ չհեռացը-
նես. Հապա զիս պահես ամեն փոր-
ձանքներեն՝ սրոնցմէ ինծի զեն մը
կրնայ ըլլալ, որ աս քնով նոր ոյժ
առնելով ու առայջութիւնս զօրա-
ցընելով՝ քեզի ալ աւելի ծառայել
կարենամ: Խնչուս որ ամեն գործ-
քերս մինակ զքեզ փառաւորելու
ու զովելու համար ըրեր եմ ու
կ'ուզեմ ընել, այնովէս ալ ի վառս

քո կ'ուզեմ աս դիշերս անցընել։
Աս քնոյ ու հանգստի ժամանակը՝
որ դուն ինձի տռւիր, մինակ քու-
կին հայրական պահպանութեամբ
կրնամ հանգիստ ու անփորձ ան-
ցընել։ ուստի աս պահպանու-
թիւնը մի հեռացըներ իզմէ, որ
չըլլայ թէ ինձի աս դիշեր փոր-
ձանք մը հասնելով չկարենամ քե-
զի աղէկ ու երկայն ժամանակ
ծառայել։ Պահէ զիս աս դիշեր
ամէն հոգեւոր ու մարմնաւոր չա-
րիքներէն, որ վաղը առառ առողջ
ու անփորձ ելլեմ ու զքեզ օրհ-
նեմ ու զովեմ։ ամէն։

ԱՂՕԹԻ

Ի՞նչ չի՞նչ սուրբ Աստուածածնայ
յանյնելու։

(Օրհնարանեալ կոյս Մարիամ,
քու մայրական սիրով ամենուն
համար սիրով լի է, չես ուզեր
որ մէկու մը զէն ըլլայ, հապա
ամէն մարդ մայրական սիրով կը
սիրես ու ամէն փորձանքներէն կը

պահես, մանաւանդ անոնք՝ որ
 քու որդւոյդ Յիսուսին ու քեզի
 սիրով կը ծառայեն: Քու մայրա-
 կան օգնութիւնդ ու սերդ իմ
 վրաս ինչուան հիմայ շատ հեղ
 ցուցուցիր, զիս ցեղ ցեղ հոգեւոր
 ու մարմաւոր վտանգներէն ապա-
 տելով, որուն Համար Հազար
 շնորհակալութիւն կը մատուցա-
 նեմ քեզի աս իրիկունս, ամենա-
 սուրբ Կոյս. բայց նաև կը խըն-
 դրեմ քեզմէ՝ որ նոյն մայրական
 սերդ ու հզօր օգնութիւնդ ինձի
 աս գիշերս ալ ցուցընես, զիս ա-
 մեն չարիքներէն ու փորձանիքներէն
 պահես, քու մայրական աչքդ վրա-
 յէս չդարձնես, ու զիս քու մայ-
 րական պաշտպանութեանդ շուքին
 տակն առնես, որ աս գիշերս ի
 փառա Աստուծոյ ու Հոգւոյս փրր-
 կութեանը Համար անփորձ ան-
 ցընելէն ետեւ, վաղը նորէն սուրբ
 սրտով սկսիմ իմ Աստուծոյս ու
 քեզի՝ Հաւատարմութեամբ ծա-
 ռայել ու զձեղ օրհնել. ամէն:



ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

ԱՂՕԹՔՆԵՐ

Խոստովանութեանի առաջ

ԱՂՕԹՔ

Մեղերը Գրեց Բերելու ու անաց
Հայ շատելու ու մեր մ'ալ մեղէ
Հընելու համար :

Ամենասիրելի Հայր ողորմութեան,
Աստուած իմ ամենապութ, գիտ-
հալով ճշմարտապես՝ որ քեզի չեմ
կրնար սիրելի ըլսալ ու քու որդի-
ներուդ ու ծառաներուդ կարգը
մտնել՝ ինչուան որ սուրբ ու
ամեն մեղքերեն մաքրուած շրլամ,
քեզի ու սուրբ կամքիդ գեմ
ըրած ըոլոր գեշութիւններես հո-
գիս մաքրել կ'ուզեմ : Բայց աս
ըանիս համար հարկաւոր է ինձի
քու զօրաւոր շնորհքդ որ նախ
միաքս ըերեւ, յիշել տայ ինձի

իմ ամէն մեղքերս՝ որոնք որ մաքով,
 խօսքով ու գործքով ըրեր եմ, որ
 կարենամ առոնք մէկիկ մէկիկ խոս-
 տովանիլ. ետքը տայ ինձի ճշմա-
 րիտ ցաւ ու զղիում անոնց վրայ,
 որոնցմով զքեզ, իմ սիրելի՝ Աս-
 տուածս, փրկիչս ու բարերարս
 սղողցուցեր եմ: Կաեւ ոյժ տայ ինձի
 նոյն շնորհքը՝ որ հաստատ միտքա
 դնեմ մէջ մ'ալ մեղք շընելուքեզի
 դէմ, ու քու պատուերներէզ դուրս
 չելլելու: Իրաւցընէ, բազումողորմ
 Աստուած իմ, աս շնորհքիդ ու-
 ժովք հիմա իմ հոգւոյս ցեղ ցեղ
 մեղքերը տեսնելով, սիրոսկը ցաւի
 կը խշխշայ իմ ասչափ ու ասանկ
 չարութեանս վրայ, որ քեզի ըրած
 խոստմունքներս մասնալով ու քու
 ինձի ըրած անթիւ աղեկութիւն-
 ներդ չմիշելով, քեզի դէմ դար-
 ձեր, քեզի անշնազանդ եղեր եմ,
 զքեզ թողուցեր ու չար ստու-
 նային ճամկան բաներ եմ: Բայց
 հիմա ցաւալի ու զղջացած սրտով
 կ'ըսեմ, մեղայ, Տէ՛ր, քաւէ իմ
 մեղքերս, թողութիւն տուր յան-

յանքներուս, աւելցուր ցաւս իմ
 մեղքերուս վրայ: Ծնորհը տուր ին-
 ձի, որ հիմա առ ամեն մեղքերս աղեկ
 խոստովանիմ ու մեծ ցաւով ու
 զղջումով պատմեմ քահանային՝
 որ քու տեղդ իմ խոստովանութիւնս
 պիտի ընդունի: Աս խոստովանան-
 քիս ուժովք քեզմէ իմ ամեն մեղ-
 քերուս թողութիւնն առնելով
 ինչպէս որ կը յուսում, սուկից եռ-
 քը քու շնորհքովդ ուժովցած՝ միտ-
 քը հաստատ կը դնեմ ու կը խոս-
 տանամ, ամենասիրելի՝ Աստուած
 իմ, հազար հեղ ամեն տեսակ տան-
 ջանքներով տանջուիլ ու մեռնիլ,
 քան թէ ողջափակ մեղքով մը որդող-
 թընել: Ո՞վ սիրելի Յիսուս, հոգւոյս
 ամենաքաղցր փրկիչը, տես սրտիս
 ցաւը, ներէ իմ մեղքերուս ու
 շնորհը տուր ինձի, որ աս ցաւս
 ու խոստովանանքս աղեկ ու կա-
 տարեալ ըլլայ: որով քեզի սի-
 րելի ըլլամ: ամեն:

Խոստովանու. Թեհնէ եղայլ

ԱՆՕԹԻՔ

Ընորհակալութեան ու հոգիւար
ուրախութեան :

ՏԵՇ իմ Յիսուս Քրիստոս, Հոգ-
ւոյս աիրելի փրկիչն ու բարեկամը,
ահա Հիմա քու սուրբ շնորհքովդ
ու օգնութեամբ մեղքերուս մեջէն
ելայ, խոստովանեցայ իմ ամեն գեշ
խորհուրդներս, խօսքերս ու դործ-
քերս՝ սրտանց զղջալով ու ցաւե-
լով. ուստի անտարակոյս կը յու-
սամ որ քեզմէ ներում ու թաղու-
թիւն առի: Առ, ՏԵՇ, ընդունե
Հիմա իմ շնորհակալութիւնս՝ զոր
սրտանց ու բոլոր հոգւովս կը մա-
տուցանեմ քեզի առ մեծ ողորմու-
թեանդ համար: Հոգիս մեղքերէն
ազատած ըլլալով՝ մեծ ուրախու-
թիւնէն մարմնոյս վրայ շիկրնար
հանդարտիլ. լեզուս կ'ուզէ քեզի
բիւր շնորհակալութեան խօսքեր
զրուցել, բայց շիկրնար խօսք դրտ-
նել սրտիս զղացմաւնքը յայսնելու:


Դուն, Տէ՛ր իմ, սիրոս ու ծածուկ
խորհուրդներս ճանչնալով՝ զիտեմ
որ սրտիս շնորհակալութիւնը կը
տեսնես ու կ'ընդունիս : Մինակ քու
աստուածային սէրդ ու շնորհքդ
ուժովցընէ զիս, որ կարենամ աս
շնորհակալութիւնը ասանեկ հոգեւ-
որ ուրախութեամբ սրտի քեզի ա-
մեն առեն մատուցանել . ամեն :

ԱՆՕԹԻՔ

Անեղ հայլ շնորհէը ինդրելու-
համար :

Ո՞վ Տէ՛ր իմ ու Աստուած իմ, ինչ-
պէս կրնամ հոգեւոր ուրախու-
թեան մէջը մնալ՝ ինչուան որ աս
սուրբ ու անմեղ վիճակին մէջը՝ որ
հիմա զզօւմով խոստովանելովս
մուայ՝ հաստատ չմնամ : Ասոր հա-
մար կ'աղաչեմ քեզի՝ որ տաս ին-
ծի քու շնորհքդ՝ որ հիմա դրած
մոքիս վրայ հաստատ ու անփոփոխ
մնամ : Չըլայ որ նորէն ես դառ-
նամ իյնամ մշղքի մէջ, քեզի թրշ-
նամի ըլլամ, քու սիրելիներուդ

մէջէն ելլէմ ու զքեզ սրդողը ընեմ :
 Առ իզմէ, Տէ՛ր իմ, ինչ որ ունիմ,
 ոյժս, առողջութիւնս, մարտինս ու
 կեանքս ալ . միայն թէ մի թո-
 զուր որ մէջ մ'ալ քեզի գէմ գառ-
 նամ, սուրբ կամքիդ գէմ ընեմ,
 քեզի ատելի ըլլամ ու մեղաւոր տղոց
 կարգը մանեմ : Կ'նչ ուրախութիւն
 պիտի ըլլայ ինձի՝ թէ որ շատ օրեր
 անցնելէն ետքը աւանեմ զիս միշտ
 սուրբ ու անմեղ տղոց պէս քու սի-
 րոյդ ու բարեկամութեանդ մէջը :
 Աս ուրախութիւնը մինակ դուն
 քու ամենազօր շնորհքովդ կրնաս
 ինձի տալ, զոր հիմա մէծ աղաչան-
 քով կը ինդրէմ քեզմէ . որ առանց
 մեղքի մէծնամ ու օրէ օր աւելի
 շնորհքներ առնելով քեզմէ՝ հառ-
 նիմ յաւիտենական ուրախու-
 թեան . ամէն :



Zechmeyer'sc.

ՍՐՅՈՒԹԻՒՆ

ԱԴՐԵՆԵՐ

Արքա.թիւն տոնելէն տուազ

U. S. O. P. F.

Յէսուս առ մարդկան առ ըստ
բարեկալիք:

Ամենասիրելի Առառածութեան ու
Քրիստո Յիսուս Քրիստոս, որ չէ թէ
միայն ինձի համար աշխարհը եկար,
մարդ եղար ու խաչին վրայ մեռար,
հապա ուղեցիր որ Երկինք ելլելեզ
ետքը սուրբ հաղորդութեան մշջը,
աստուածութեամբդ ու մարդկու-
թեամբդ մեր քովը մնաս, ահա՝ ես
հիմայ քու շնորհըովդ մեղքերես
մաքրուած՝ կը պատրաստուիմ ու
կը բաղձամ քեզի մօտիկնալու ու
կքեզ իմ սրտիս մշջն առնելու ։
Կնչ մեծ երջանկութիւն է աս, Տէ՛ր
իմ Յիսուս Քրիստոս, որուն զիս

Հիմակ արժանի կ'ընես . Ե՞նչ մեծ
 շնորհք ու ողորմութիւն է՝ որ ին-
 ձի կը ցուցընես , ուզելով որ քե-
 զի զամ ու զքեզ , այսինքն՝ բու մար-
 մինդ , արիւնդ , հոգիդ ու աստուա-
 ծութիւնդ , երկնի ու երկրի Աս-
 տուածն ու իմ հոգւոյս փրկիչն ըն-
 դունիմ : Ես չեի ու չեմ արժանի
 ասանկ անպատմելի պարզեւն ու
 դանձր՝ ու անով ամենամեծ երջան-
 կութիւնը գտնելու . բայց որովհե-
 տեւ գուն կ'ուզես ութով կու տաս
 որ զամ քեզ առնեմ , անոր հա-
 մար հիմայ քու առջիդ ինկած բոլոր
 ուժովս ու հոգւովս կը խնդրեմ
 քեզմե . մե՛կհատիկ սիրելի փրկիչս , որ
 ինձի նորեն շնորհք տաս՝ քեզ մա-
 քուր սրտով ու աղեկ պատրաս-
 տութեամբ առնելու : Չըլլայ որ
 սրտիս մեջը պղտիկ մեղաց աղտ
 մը մնացած ըլլալով՝ քեզի արժա-
 նաւոր տեղ չըլլայ հոն , ու սիրտս
 եկած տաենդ վշտանաս ու սրբ-
 դողիս ինձի : Ուստի տուր ինձի
 քու առաստ շնորհքդ . սիրտս կա-
 տարելապես մաքրե սրբե , որ ար-

Ժանի ըլլամ զքեզ անմեղութեամբ
ընդունելու, ու զքեզ ընդու-
նելու ետքը՝ սուրբ ու անմեղ ապ-
քելու ինչուանի ի մահ. ամեն :

ԱՂՕԹՆՔ

Սուրբ Առաքուածածինեն՝ իր սրբայն
ժամանը արժանապես ընդունելու օդ-
նունիւնը խնդրելու համար :

Տիրամայլը սուրբ կոյս Մարիամ,
որ պզտի հասակիդ մէջը սուրբ ու-
ռոլորովին անմեղ ապքելով՝ արժա-
նի եղաց Աստուծոյ Որդին, եր-
կինքի ու երկրի սաւզձողը ծնանե-
լու, կաղաչեմ քեզի հիմակ՝ որ իմ
անարժանութեանս չնսյելով՝ քու
ամենասիրելի որդիւդու Յիսուսեն
առնես ինծի շնորհը, որ զինքը
մաքուր մաքով, սուրբ սրտով ու
աղէկ պատրաստութեամբ ընդու-
նիմ։ Տուր ինծի, սուրբ Աստուծու-
ծածին, ան ջերմեռանդութեանն
ու ան սիրոյն մէկ կաթիլը՝ որն
որ դուն ունեիր Աստուծոյ Որ-
դին՝ Գալքը հրեշտակին աւետու-

մովե ընդունած ժամանակիդ : Բարեխօս եղիք ինձի համար քու սիրելի Որդւոյդ՝ որ տայ ինձի քու իրմէն առած անչափ շնորհքիդ մէկ պղտիկ մասը, որ ևս ալ կարենամ արժանաւոր պատրաստութեամբ, մաքրութեամբ ու եռանդով զինքը սրտիս մէջ ընդունելու : Թէ որ ինչուան հիմայ բոլորովին անմեղ չապրելով քեզի չկրցայ նմանիւ նէ հիմակ շնորհք առ ինձի որ տօրուան ցաւս ու զղջումն մեղքերուս վրայ հաստատ ըլլայ, ու քու Որդիդ սրտիս մէջը առնելէս ետքը՝ նորեն մեղք չընեմ ու անով զինքը սրտէս դուրս չվարեմ : Օդնէ ինձի, ամենասուրբ Կոյս, սիրելի մայր իմ, որ հոգեւոր ինստումով ընդունիմ քու Աստուածորդիդ, ու անմեղութեամբ առ հոգեւոր խրնումիս մէջ ապրիմ քու հզօր բարեխօսութեամբդ . ամէն :

Արքութիւն առնելէն կայլը

Ա Դ Օ Թ Ք

Յէսուսին շնորհածաւ ըլլուս- համար :
Ո՞վ ամենասիրելի փրկիչս ու բա-
րերարս Յիսուս, Հոգւոյս խնդու-
թեանն ու Երջանկութեանը մեկ
հատիկ պատճառը, շունիմ ոյժ,
շունիմ խօսք՝ որ կարող ըլլասմ քե-
զի շնորհակալութիւն մատուցանել
ասանկ անպատճելի մեծ սիրոյդ հա-
մար՝ որով ուզեցիր սցսօր իմ սիրառ
Դալ, ինձի հրաման տալ որ գամ
քեզ սրտիս մեջ առնեմ, ու ասով
զիս ամեն մարդիկներէն աւելի Եր-
ջանիիկ ըրիր : Դնէ ընեմ, Տէ՛ր իմ, որ
կարենամ քեզի կատարեալ շնոր-
հակալութիւն մատուցանել ասանկ
մեծ շնորհքին ու ողորմութեան
համար որ ինձի ըրիր : Մինակ զքեզ
բոլոր ուժովս սիրելովս, քեզի գէմ
շմեղանչելովս կրնամ ցուցընել իմ
շնորհակալութիւնս . անոր համար

սուրբ կոյս Աստուածամայրն ու
 ամեն սուրբերը ինձի բարեխօս ու
 օգնական առնելով՝ կ'իյնամ քու
 առջիղ ու կ'ըսեմ, սիրելի վրկիչ
 Յիսուս, որ Հիմայ սրտիս մշջն ես,
 կը սիրեմ զքեզ բոլոր կամքովս,
 բոլոր հոգւովս ու բոլոր ուժովս
 ամեն բանեն վեր : Դեռ աս պզտիկ
 Հասակիս մշջը չդիտնալով թէ ինչ-
 պէս կրնամ զքեզ աղեկ սիրել ու
 քու կամքդ ընել, կը խոստանամ
 քեզի՝ որ ասկից ետեւ մեծ եռան-
 դով ու մեծ սիրով պիտի սորվիմ
 քու սուրբ Հաւատքիդ ուսմունքը,
 քու պատուիրաններդ ու քու
 իրատներդ, որ սուրբ աւետա-
 րանն ու սուրբ եկեղեցին իմ վար-
 պեաններուս ըերնովը ինձի կը սոր-
 վեցընեն : Պիտի աշխատիմ որ բո-
 լոր իմ Հասակակիցներս ալ սորվին
 ու սկսին զքեզ մեծ եռանդով սի-
 րելու ու քեզի մօտիկնալու՝ զքեզ
 սուրբ Հաղորդութեան մշջ ըն-
 դունելու Համար, որ իրենք ալ աս
 ուրախութիւնն ունենան՝ որն որ
 ես ունիմ Հիմայ զքեզ իմ սրտիս

մ. ջը սռնելուս համար : Ամենա-
սիրելի փրկիչս ու բարերարս Յի-
սուս, միացիր իմ սրտիս մէջը ա-
մէն իժիր . մի թողուր որ մեղք մը
լնելով կամ աշխարհքիս մէջը
խելքս միտքս ուրիշ բաներու առ-
լով դքեզ սրտես հանեմ : Թէ որ
կուզես, Տէր իմ, խրկէ ինձի առ
պղտիկ հասակիս մէջ ցաւեր ու մահ,
միայն թէ իզմէ մի հեռանար . ու
թէ որ դուն ինձի հետ ես, ան ատե-
նը կրնամ ամէն ցեղ բարիքն ընել
ու քեզի ծառայել, որ օր մ'ալ
գամ արքայութեան մէջը քու սի-
րելիներուդ հետ զքեզ օրհնեմ ու
դովիճամ յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Ո՞ւ ո՞ր իսոսակալանաց ու հազարդառութեան
վայր գերի իսոսարտալ զաքարի իսոսալու-
թեան առջեւ առ ազօնիւշ իշնեւ . լու-
իսոսար ներազանենիւն իշ կըսակախի :

Վաղցրադութեւ բարի Յիսուս,
ունաւ քու առջեւդ Երեսի վրայ Են-
կած մեծ փափադով կ'աղաւեմ ու

կը սպազատիմ, տպաւորէ իմ սըր-
տիս մէջը հաւատք, յոյս, ոէր ու-
ցաւ մը իմ մեղացա վրայ, նաեւ հաս-
տատուն առաջադրութիւն մ'ալ
քեզ չվշտացընելու, ինչու որ ես ալ
մեծ ցաւով ու զերմեռանդութեամբ
քու հինգ վերբերդ կը մասձեմ, յի-
շելով Դաւիթ մարդարեին խօսքը
որ կ'ըսէ . "Ծակեցին զձեռս իմ եւ
զոսս իմ, եւ թուեցին զամենայն
ուկերս իմ,, :



ՊԱՏԱՐԱԳԻ

ԱԴՐՅԱՆԵՐ

ԱԴՐՅԱՆ

Գագարան ունելիքն առաջ զերե-
ռանդաւթեան չնորհէը խորելո-
համար :

Եխոնս Քրիստոս Որդի Աստո-
ծոյ, ճշմարիտ Աստուած ու Քրիս-
տոս, մեծ ահօվ բայց մեծ խնառու-
մով կը մտնեմ քու առւնդ՝ սուրբ
Եկեղեցւոյ մէջ ու կը մօտիկնամ քու
սուրբ խորանիդ, ուր հիմա քահա-
նան սուրբ Եկեղեցիւն իշխանու-
թիւն առած՝ պիտի ելլէ քու հրա-
մանավոր սուրբ պատարագը մա-
տուցանելու ու քու սորվեցուցած
խօսքերդ ըսելու, որ գուն իշխաս
Երկինքէն ու աստուածութեամբոց
եւ մարդկութեամբոց ներկոյ ըլլաս
սուրբ հաղորդութեան մէջ : Տուր
ինձի չնորհը, որ մաքես ուրիշ ա-

մեն բանը դուրս հանեմ հիմա , ու
բոլոր մոքովս առ մեծ ու հրաշալի
գործքին վրայ մտածեմ . մեծ ջեր-
մեռանդութեամբ տեսնեմ առ
սուրբ պատարագը՝ որ քու զօրու-
թեամբդ պիտի մտուցանէ քահա-
նան : Փրկիչ իմ Յիսուս, որ զիս շատ
սիրելուդ համար կ'ուղես ամեն ժա-
մանակ քահանային խօսքովը երկին-
քեն դալ սուրբ բեմին վրայ հացին
ու գինոյն մէջ մեզի հետ ըլլալ,
օգնէ ինձի որ առ հիմակուան սուրբ
պատարագը անանկ տեսնեմ՝ ինչ-
պէս որ պէտք է ու կը վայլէ , որով
քեզի սիրելի ըլլամ ու քեզմէ աւելի
շնորհք առնեմ . ամեն :

ԱՆՕԹԻ

Աւ Եկեղ Ար Յիսուս Քրիստոս
պատարագի Աջ :

ՏԵՐ իմ ու փրկիչ իմ Յիսուս, կը
հաւտամ ու կը խոստովանիմ՝ որ
գուն երկնի ու Երկրի արարիչը մարդ
ըլլալէդ, մեռնելէդ, յարութիւն
առնելէդ ու Երկինք ելլելէդ ետեւ

միշտ մեր քովը կը մնաս չեւ թէ մինակ
 ասսուածութեամբոդ հապա մարդ-
 կութեամբոդ ալ, որ մեզի հոգեւոր
 կերակուր ու խմելիք տաս ու մեր
 հոգին ուրախացընես : Դուն երկինք
 ելլելովդ մեզ որր չեմողուցիր, հա-
 պա ամեն իժիր սուրբ պատարագին
 մէջ մեզի կու դաս ու կ'ուզես որ
 քահանային ձեռքին վրայ քեզ տես-
 նենք ու անոր ձեռքեն քեզ մեր սիր-
 որ ընդունինք : Երկինքը հրեշտակ-
 ներն ու սուրբերը քեզ յայտնի կը
 տեսնեն, մենք ալ երկրի վրայ ճշմա-
 րիս հաւաքով կը տեսնենք զքեզ
 սուրբ հաղորդութեան մէջ : Դուն
 քու սուրբ աշխերտներուդ պատուի-
 թեցիր որ աս սուրբ պատարագին
 խորհուրդը կատարեն ամեն իժիր :
 Արով քրիստոնեները քու չարշա-
 րանքդ ու զքեզ յիշեն : Աս բանիս
 համար հիմա աս սուրբ պատարա-
 գին առջեւը քեզի սրտանց շնորհա-
 կալութիւն կը մատուցանեմ, Տէ՛ր
 իմ Յիսուս, որ զմեզ առշափ սիրեցիր
 ու մեզի առանկ մեծ ողորմութիւն
 Յուցուցիր ուզենալով ամեն ժա-

մանակ մեզի հետ ըլլալ : Հազար
 շնորհակալութիւն ու զոհութիւն
 կու տամ քեզի՝ որ մեր անարժանու-
 թեանը շնոյելով՝ կը կանչես զմեզ
 քու սուրբ եկեղեցւոյդ մշջը քահա-
 նային հետ մէկտեղ զքեզ Հօր Աս-
 տուծոյ մեր մեղքերուն թողու-
 թեանը համար պատարագ մատու-
 ցանելու : Տէ՛ր իմ ու փրկիչ իմ Յի-
 սուս, առ անմահ պատարագին մեծ
 զօրութեամբը թողութիւն տուր
 մեղքերուս, մաքրէ հանէ իմ մորէս
 ու սրտէս ամէն ցեղ գեղութիւն-
 ները՝ որոնցմով քու սերեգ կը հե-
 ռանամ : Տուր ինձի շնորհը որ
 սս մեծ հրաշքին համար՝ որով ա-
 մէն իժիր քահանային Առեւ իւրեւ
 ոյս է նորմին իմ, ու Արբեւ է սմանէ
 ամենէ իւսն ոյս է արէւն իմ ըսելովը
 երկինքէն կ'իջնաս հացին ու զին-
 ային վրայ, զքեզ մեծ եռանդով
 սիրեմ, ու տանիկ մեծ սիրով զամ
 ամէն հեղ սուրբ պատարագը տես-
 նելու ու անոր ապաստարութիւն
 ընելու : Կ'աղաշեմ քեզի որ ընդու-
 նիս իմ սրտիս փափառը՝ որով կը

բարձաւմ զքեզ ամէն օր սուրբ պատարագին մեջը տեսնելու, անով քու ինծի Համար մարդ ըլլալդ ու մեռնիլդ միուրս բերելու: Փրկիչ իմ Յիսուս, մի ժաղուր որ Հիմակուան աս սուրբ պատարագով ինծի ցուցուցած սիրոյդ ազերախտ ըլլամ, Եկեղեցիեն ելլելւ և առը աս քու մեծ սէրդ մոռնամ, ու պատարագէն ետքը շուտ մը սկսիմ անհաւատներու աղօց պէս ինքը զինքս խաղալու խնտալու տալ: Ընորհք տուր ինծի որ ամէն օր աս սուրբ պատարագը չերմուանդութեամբ տեսնեմ. ու թէ որ աս չիկրնար ըլլալնէ՝ զոնէ կիրակի ու տօն օրերը տեսնեմ, ու մեծ ուրախութեամբ անոր սպասաւորեմ ի փառս քո. ամէն:

ԱՂՕԹՆՔ

Առ սուրբ Աստուածածինը՝

պատարագէն մէջ:

Եցրանուհի կոյս Մարիամ, իմ ամենասիրելի՝ մայրս ու բարեխօսս, Հիմա աս սուրբ պատարագին ժամա-

նակը իմ տմենասիրելի փրկչիս Յի-
 սուսին՝ քու Աստուածորդւոյդ
 մարմնոյ ու արեան խորհուրդը
 տեսնելով՝ կը յիշեմ իր ինձի
 համար մարդ ըրբալը, ու անով
 կ'իմանամ որ իմ փրկչւս եարք
 գուն պատճառ եղար ինձի առ
 մեծ շնորհըն ու ուրախութիւնը
 ունենալու : Խնչու որ գուն Աստու-
 ծոյ Որդւոյն մեր փրկչին մայրն ըլ-
 լալով՝ մեր փրկութեանը օդնական
 եղար . ու ես հիմա աս սուրբ պա-
 տարապին մշջը իմ Յիսուսս տես-
 նելով՝ ինչպէս կրնամ զքեզ միարա
 շրերել, սուրբ Աստուածամայր,
 ու քեզի շնորհակալ շրլալ՝ որ մեզի
 տասներ մեծ բարերար մը տուիր ։
 Իրաւցընե՝ սրտանց շնորհակալ
 կ'ըլամ քեզի աս մեծ բարերարու-
 թեան համար, բայց պինու առաջ
 որդիական սրտով կը խնդրեմ քեզ-
 մը, ամենողորման մայր իմ, որ
 ինձի շնորհը առնես քու սիրելի որ-
 դիեղ՝ ամեն հեղ աս սուրբ պա-
 տարապը աղեկ մատագրութեամբ
 ու մեծ ջերմեռանդութեամբ տես-

նելու : Երնելի ինծի էր , թէ որ ար-
 ժանի ըլլայի քու բարեխօսու-
 թեամբ հիմա ան զերմեռանդու-
 թեան մէկ փոքր մասն ունենալ
 որ դուն քու սիրելի որդւոյդ քո-
 վը եղած ատենդ իրեն ձնընդենեն
 մինչեւ իր թաղումը ունեիր : Սուրբ
 կոյս Աստուածածին , դուն քու որ-
 դիդ ու զքեզ սիրոզ աղաքը կը սի-
 րես ու անոնց բարի խնդիրքը կը
 կատարես . անանկ է նէ՝ կատարե-
 իմ սրտիս բաղձանքն ալ . մի թո-
 շուր որ քու որդւոյդ ինծի աս սուրբ
 պատարագով ըրած շնորհքին ան-
 արժան գտնուիմ , հապա օգնէ ին-
 ծի՝ որ բոլոր միտքս ու սիրաս իրեն-
 ալով՝ իրմէ աս պատարագին
 ուժով մեծ շնորհքներ առնելու
 արժանի ըլլամ . ամէն :

Մ Ա Դ Թ Ա Ն Ք

Առ որբուհի իոյս Աստվածաշնչինը :

Տէր ողորմեաց :

Քրիստոս ողորմեաց :

Տէր ողորմեաց :

Քրիստոս լուր մեզ :

Քրիստոս անսոս մեզ :

Հայր Երկնաւոր Աստուած, ողորմեաց մեզ :

Որդի փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեաց մեզ :

Հոգիդ սուրբ Աստուած, ողորմեաց մեզ :

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողորմեաց մեզ :

Սուրուհի Մարիամ, սրբութեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին . աղօտ

Սուրբ կոյս կուսանաց . աղօտ

Մայր Քրիստոսի . աղօտ

Մայր աստուածային շնորհաց . աղօտ

Մայր մաքուր . աղօտ

Մայր սուրբ . աղօտ

Մայր անարատ . աղօտ

Մայր անրիծ . աղօտ

Մայր սիրելի .	աղօ:
Մայր սքանչելի .	աղօ:
Մայր արարչին .	աղօ:
Մայր փրկչին .	աղօ:
Կոյս իմաստուն .	աղօ:
Կոյս յարգոյ .	աղօ:
Կոյս քարոզելի .	աղօ:
Կոյս հզօր .	աղօ:
Կոյս դժաճ .	աղօ:
Կոյս հաւատարիմ .	աղօ:
Հայելի արդարութեան .	աղօ:
Աժռու իմաստութեան .	աղօ:
Պատճառ մերոյ խնդութեան .	աղօ:
Անօթ հոգեւորական .	աղօ:
Անօթ պատուելի .	աղօ:
Անօթ ընտիր աստուածոլաշ-	
տութեան .	աղօ:
Ա արդ խորհրդական .	աղօ:
Աշտարակ դաւթեան .	աղօ:
Աշտարակ փղոսկրեայ .	աղօ:
Տուն ոսկեղեն .	աղօ:
Տապանակ ուխտի .	աղօ:
Դուռն երկնից .	աղօ:
Աստղ առաւօտեան .	աղօ:
Առողջութիւն հիւանդաց .	աղօ:
Ապաստան մեղաւորաց .	աղօ:

Ասիթարիչ վշտացելոց . աղօւ
 Օգնական քրիստոնէից . աղօւ
 Թագուհի հրեշտակաց . աղօւ
 Թագուհի նահապետաց . աղօւ
 Թագուհի մարդարէից . աղօւ
 Թագուհի առաքելոց . աղօւ
 Թագուհի մարտիրոսաց . աղօւ
 Թագուհի խոստվանողաց . աղօւ
 Թագուհի կուսանաց . աղօւ
 Թագուհի ամենայն որբոց . աղօւ
 Պահպանիչ որդեգրաց . աղօւ
 Գառն Աստուծոյ , որ բառնաս
 զմեզս աշխարհի , խնայեա ի
 մեզ Տէր :

Գառն Աստուծոյ , որ բառնաս
 զմեզս աշխարհի , անսաւ մեզ
 Տէր :

Գառն Աստուծոյ , որ բառնաս
 զմեզս աշխարհի , ողորմեաց
 մեզ :

Յիսուս լուր մեզ :

Քրիստոս անսաւ մեզ :

Ա Հ Օ Թ Ա Բ

Աստուծ անձառելի ողորմու-
 թեան , որ ոչ միայն մարդ , այլեւ

որդի մարդոյ լինել հաճեցար, եւ
ծնանելով ի կուսէ զմայր ի յերկ-
րի ստացար, որ զԱստուած ու-
նեիր հայր ի յերկինս . ոուր մեզ
աղաչեմք զյիշատակ նորա յօժա-
ռութեամք կատարել զմայրու-
թիւն նորա գերագոյն յարդանօք
պատուել, զերազանցադոյն վաե-
մութեան նորա զմեզ խոնարհու-
թեամբ հալատակել . որ զքեզ Հո-
գով սրբով յղացաւ, զքեզ կու-
սութեամբ ծնաւ եւ զքեզ յեր-
կրի ինքեան հնազանդ կալսւ,
ԴՏէրդ մեր Յիսուս Քրիստոս, որ
կենդանի ես եւ թագաւորես ընդ
Հօր եւ ընդ սրբոյ Հոգուոյն ի յաւի-
տեանս . ամէն :

Ընդ հովանեաւ պաշտամանու-
թեան քոյ ապաւինիմք, սուրբ Աս-
տուածածին, մի անտես առնելը զա-
ղաչանս մեր ի կարիս մեր . այլ միշտ
փրկեա զմեզ յամենայն վտան-
գից, Կոյս ամենավառառ եւ
ամենօքհնեալ :

Ողջ լեռ, թագուհի, մայր ողոր-
մութեան, կեանք, քաղցրութիւն,

եւ յոյս մեր . ողջ լեր : Առ քեզ զո .
 չեմք արսորեալ որդիքս Եւայի , առ
 քեզ հառաշեմք հեծելով եւ ող-
 բալով յայսմ արտասուաց վայրի :
 Արդ . ով բարեխօս մեր , դարձու
 առ մեզ զայս ողորմութեան քո . եւ
 զօթիսուս զօրհնեալ սլառուղն որո-
 վայնի քո յետ այսր արսորանաց
 ցոյց մեզ , ով զթած , ով բարե-
 գութ , ով բաղզը կոյս Մարիամ .
 աղաշեա վասն մեր , սուրբ Աստուա-
 ծածին . զի արժանի լիցուք խռու-
 մանցն Քրիստոսի . ամէն :



Zechmäyerle.

ԶԱՆԱԶԱՆ

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Բ

ԱՆՕԹԱԲ

ԾԱՆՈՂՄԱՆ Համար :

Տէր Աստուած իմ, գուն ինձի քու
սուրբ կամքովդ պատուիրեցիր որ
իմ ծնողքս՝ հայրս ու մայրս սիրեմ,
յարգեմ ու ամեն ժամանակ իրենց
մտիկ ընեմ. աւելի աղեկ չեմ կրնար
իմ իրենց վրայ ունեցած որդիա-
կան սէրս ցուցընել՝ քան թէ ամեն
օր իրենց համար քեզի ազօֆք ընե-
լով՝ որ իրենց վրայ ողորմիս ու ի-
րենց ամեն տեսակ հոգեւոր ու մար-
մնաւոր բարիք տաս, որ կարենան
աս աշխարհքիս մէջը քեզի աղեկ
ծառայել ու յաւիտենական կենաց
արքայութեան մէջը արժանի ըլ-
լաւ : Ճնորհք տուր իրենց որ ա-
մեն ժամանակ ու ամեն զործքի
մէջ ճշմարիտ ուղղափառ քրիստո-
նէի ողես քու սուրբ կամքդ կատա-

բեն, արքայութեան համբեն դուրս
 չելեն եւ ուրիշներու ալ բարիք
 ընելու պատճառ ըլլան : Իմ վրաս
 ունեցած աշխատանքներնուն հա-
 մար՝ որով կը ջանան ինձի քու
 սուրբ կամքու ու քեզի ծառայելու
 համբան սորվեցընել, աւելցուր ի-
 րենց վրայ քու շնորհքու . իրենց
 ոյժ տուր որ ինձի օգնեն քեզի ա-
 ղեկ ծառայելու . ու ասոր համար
 ալ զիրենիք արքայութեան Աջը
 վարձատրէ : Կաեւ կ'աղաչեմ քեզի,
 ամենողորմ արարիչ իմ, որ քու
 հայրական դժութեամբու պահես
 իմ հայրս ու մայրս ամեն մարմնաւոր
 փորձանքներէն ու հիւանդութիւն-
 ներէն, որ չըլլայ թէ ցաւով ու
 մաշելիքներով անցընեն իրենց օրե-
 րը : Ու թէ որ քու ամենօր հնեալ
 կամքովդ իրենց վրայ նեղութիւն-
 մը խաւրելու ըլլաս՝ իրենց համբե-
 րութիւն տուր, որ ամեն բանը սի-
 րով քաշելով երկինքը մեծ վարձք
 ունենան, ամեն :

ԱԴՕԹԻՔ

ԵՎԵԿՐՈՒ ԱՆ+ՔԱՆԱԾՄԱԿ ՀԱՅԱՐ :

Հայուս քրիստոս ողորմած փրկիչ
իմ, որ մեզ չափէ դուրս սիրելուդ
համար աշխարհը եկար, մեր եղ-
բայրն ու բարեկամն եղար, ու մեզի
սորվեցուցիր որ իրար՝ մանաւանդ
մեր մարմնաւոր եղբարներն ու քոյ-
թերը սիրենք ու իրարու ամեն իժիր
աղէկուժիւն ընենք. ահա ես քու
շնորհըովդ քուկին աս սրանչելի
պատուիրանդ կատարել բաղձա-
լով՝ կը խնդրեմ քեզմէ որ իմ եղ-
բայրներուս ու քոյթերուս քու
սուրբ շնորհըդ տաս, որ զքեզ ու
երկնաւոր Հայրդ Աստուած ամեն
ժամանակ սիրեն, մեղք գործելով
քեզ չարդողցընեն ու քեզմէ չհեռա-
նան: Հանե իրենց սրտեն աշխարհ-
քին սէրն ու անկարդ բաղձանք-
ները, ու տուր իրենց լոյս եւ ոյժ
ամեն բանի մէջ քու կամքդ կա-
տարելու, քու աստուածային պա-
տուիրաններդ ու քրիստոնէական
ու սմաւնքդ սիրով ու եռանդով

սորվելու ու անոնց համաձայն ապ-
րելու : Հեռացներ իրենցմէ գել ու
աշխարհառեր ընկերները, որ չըլլայ
թէ գել ճամբայ բռնելով հոգինին
կորսընցընեն : Դիր իրենց սրտին մէ-
ջը քու աստուածային դատաս-
տանիդ վախն ու արքայութեան
փառքին ու քու տեսոյդ փափազը,
որ կարենան ամէն դժուարութիւն-
ներու դեմ դնելով մինակ քեզի
ծառայել : Մարմնաւոր փորձանը-
ներէն ու ցաւերէն ալ պահէ զի-
րենք, որ սուրբ մօքով ու առողջ
մարմնով քեզի ծառայեն : Տուր ի-
րենց լոյս ու պայծառութիւն մտաց,
որ իրենց հարկաւոր եղած ուսում-
ները յաջողութեամբ սորվին, ու
ասանկ քեզի նման ըլլալու աշխա-
տին սուրբ վարքով ու խելացիու-
թեամբ մեծնալով . որ ուրիշներն ու
տեսնեն ու քեզի փառք տան . ամէն :

ԱՆՕԹԻՔ

Ա-Ր-Պ-Ե-Գ-Ն-Ե-Բ-Ո-Լ-Հ-Ա-Բ-Ա-Բ :

Ճիսուս Քրիստոս իմ աստուածայ-
ին ուսուցիչս, որ մարդ ըլլալէդ ետ-

քը քու քովդ առաքեալներ ու աշ-
 կերաներ առիր, իրենց քու աս-
 տուածային վարդապետութիւնդ
 սորվեցուցիր ու պատուիրեցիր որ
 երթան իրենք ալ ուրիշներուն ու-
 սուցիչ ըլլան, չնորհակալ եմ քե-
 զի որ զիս ալ արժանի ըրիր բարի
 վարդապետներու ձեռացը տակը իմ
 հոգւոյս ու մարմնոյս հարկաւոր ե-
 ղած ուսումները սորվելու : Ընոր-
 հակալ կ'ըլլամ քեզի, Տէր իմ, որ
 ինձի ասանկ բարերարներ տուիր՝
 անոնց ձեռքովը զիս տգիտութեան
 մութին մէջէն հանելով ու հոգեւոր
 եւ օգտակար ուսմանց լուսովը լու-
 սաւորելով : Կ'աղաչեմ քեզի, աս-
 տուածային վարդապետիմ Յիսուս,
 որ քու հրաշալի լուսովդ օրէ օր
 աւելի լուսաւորես ու զօրացընես
 իմ ուսուցիչներս, որ իմ միտքս բա-
 րի բարի ուսմունքներով զարդա-
 րեն : Իրենց ոյժ տուր, որ իրենք
 երկնային իմաստութեամբ լեցուե-
 լով՝ ինձի ալ գիտութեանց զանձը
 բանան ու վայլեցընեն : Պարդեւէ ի-
 րենց համբերութիւն, որով կարե-

նանիրենց աշկերտներուն տկարութեանը օգնել ու անոնց բարի ուսուցիչ ըլլալ։ Դունքու առատ ոզորմութեամբդ վարձատրէ զիրենքիմ ու աշակերտակիցներուս վրայունեցած աշխատանքներնուն համար։ Աս աշխարհքիս մեջը իրենց բարի բաղձանքը կատարէ։ լեցուրիրենց սիրտը ուրախութեամբ, պահէ զիրենք ամեն նեղութիւններէն ու վտանգներէն, ու օրմ'ալ իրենց բարի աշխատութեանցը վարձքը տուր արքայութեան մեջը, ուր զքեզ օրհնեն ու գովեն յաւիտեանս յաւիտենից։ ամեն։

ԱՆՕԹԻՔ

Ամեն ժաբդիներու համար։

Ամենակարող Աստուած, ստեղծող ու հայր ամեն մարդկան, որ հայրական աչքով ամեն իժիր մեր վրան կը նսյիս, մեզի մեր ամեն օրուան հացն ու ամեն հարկաւոր եղած բաները կու տաս, կը խնդրեմքեզմե որդիական խոնարհութեամբ որ քու բարերար կամօրդ շնորհք

տաս ամէն մարդկանց, մանաւանդ իմ
 հասակակիցներուս, որ քեզ իրենց
 ստեղծիչն ու քու որդիդ Յիսուս
 Քրիստոս իրենց վրկիչը ամէն բանեն
 աւելի, սիրեն, քու սուրբ կամբդ,
 քու պատուիրաններդ լման կատա-
 րեն, չար ճամբէն ու մեղքեն հեռու
 կենան ու արքայութեան ճամբուն
 վրայ քալեն : Մի թողուր, ամենա-
 բարի արարիչ իմ, որ քու ստեղ-
 ծուածներդ մեղքի մշջ ապրելով՝
 քեզի ատելի ու չար սատանային
 սիրելի ըլլան : Լուսուորէ ամենքն
 ալ սուրբ հաւատքի ու քրիստո-
 նեական ուսմանց լուսովը, որ քեզ
 աղէկ ճանչնան ու սիրեն ու քեզի
 սրտանց ծառայեն, որ յաւիտենա-
 կան ուրախութեան արժանի ըլլան :
 Հեռացուր, տէր Աստուած իմ, մեզ-
 մե ամէն չար թշնամիներն ու նե-
 ղիչները . պահէ զամենքս ալ ամէն
 չարիքներէն ու պատահարներէն :
 Տուր, Տէր, ամենուն իրենց հար-
 կաւոր ապրուսոր, որ քու պար-
 զեւներդ վայելելով՝ օրէ օր քու ծա-
 ռայութեանդ մշջը աւելի հաս-

տառնան : Առւրբ կոյս Վասուածա-
ծնայ , սուրբ Հրեշտակներուն , մեր
Հօրը սուրբ Գրիգոր Լուսաւորչին
ու ամեն սուրբերուն բարեխօսու-
թեամբը պահէ զամենքն ալ սովէն ,
կրակէն , ժանտամահէն եւ ուրիշ
հիւանդութիւններէն ու փորձանիք-
ներէն : Ամեն մէկուն գործքն ու
աշխատութիւնն օրհնէ , որ իրենց
հոգւոյն ու մարմնոյն օգտակար ըլ-
լայ . ու ասանկ քու առատ պար-
զեւներդ ընդունելով՝ քեզ օրհնեն
աս աշխարհքիս մշջը , ու ետքն ալ
արքայութեան մշջը յաւիտեանս
յաւիտենից . ամեն :

ԱՂՕԹՆՔ

ՄԵՐԵԼԾ Հոգիներուն համար :

Կաթաճ փրկիչ մարդկան Յիսուս
Քրիստոս , որ խաչին վրայ մեռնե-
լով զմեզ յաւիտենական մահուանէ-
ազատ ըրիր , որ մեզ քերնուս հա-
մար ապաշխարութիւն ընելէն ետ-
քը՝ երկնից արքայութիւնը զանք ու
քեզի հետ ուրախ ըլլանք . կ'աղաչեմ
քեզի որ ողորմիս ան մեռներուն

Հոգւոցը՝ որոնք մեղքերնուն թո-
 շութիւն առածըլլալով՝ բայց մա-
 հուընէ առաջ աս աշխարհքիս վրայ
 չկրնալով կատարեալ ապաշխա-
 րանքը ընել, հիմա անդիի աշխարհքը
 քու տառուածային արդարութեանդ
 իրենց պարտքը զանազան տան-
 ջանքներով կը վճարեն: Յիշէ, Տէր
 իմ, քու իրենց համար քաշած շար-
 շարանքներդ ու անքնց զօրու-
 թեամբը կարծեցուր իրենց պատ-
 ժոյն ժամանակը. մի թողուր զի-
 րենք քու արբայութենէդ դուրս,
 հապա ողորմելով անոնց՝ լցուր ի-
 րենց սուրբ փափագը, որով կը
 բաղձան շուտով դալ, քու, Եր-
 կնաւոր Հօրդ ու Հոգին Սուր-
 բին Երջանիկ տեսութեանն արժա-
 նի ըլլալու: Ընդունէ, տէր իմ Յի-
 սուս, ան սուրբ պատարագները,
 աղօթքներն ու ողորմութեան
 տուրքերը, որ քու հաւատացեալ-
 ներդ աս բարի Հոգիներուն համար
 ամէն օր կը մատուցանեն: Ընդունէ
 հիմա անարժանիս աղօթքն ալ, ու
 թէ որ քեզի հաճոյ է՝ շուտով

ազատէ անոնք ան պատիժեն կամ
ապաշխարանքէն : Մի յիշեր իրենց
անցած մեղքերը կամ պարտքերը,
հասկանայէ իրենց հիմակուան ջեր-
մեռանդութեանն ու սուրբ բաղ-
ձանքին՝ որով զքեզ կը սիրեն ու կը
փափագին սուրբերուդ հետ զքեզ
երկինքը փառարանելու : Ամենէն
աւելի կ'աղաչեմ քեզի, ամենողորմ
փրկիչ իմ, որ ողորմիս իմ հանգու-
ցեալ ծնողացս, եղբարցս, քրուր-
տոցս, աղդականներուս ու բարե-
րարներուս հոգւոցը, ու հասցընեա
զիրենքքու մեծ ողորմութեամբդ ան
փառքին՝ որն որ իրենց համար պատ-
րաստեցիր, որ սկսին քեզի դոհու-
թիւն մասուցանել յաւիտեանս
յաւիտենից : ամէն :

ԱՂՕԹՆՔ

Մահդարաժամի էւ սորէլ մէջ հիւան-
դութեան ժամանակի :

Մարդարաժը ու բազումողորմ Աս-
տուած իմ, զուն մեզի քու սուր-
բերուդ ըերնովը սորվեցուցիր որ

ինչ նեղութեան ու փորձանքի մէջ
 ըլլանք՝ երբ որ հաստատ հաւատ-
 քով ու յուսով քեզի կը մօտիկ-
 նանք, քեզի սրտանց կ'աղաչենք մեզ
 ո՞և փորձանքներեն հանելու, քու
 հայրական ողորմութեամբ մեզի
 կը լսես. զմեզ ամեն փորձանքներեն
 կ'աղատես ու մեր սիրութ կը հանգ-
 չեցընես: Տես, ամենողորմ Տեր,
 ծանր հիւանդութիւն մը մեր մէջը
 տարածուելով մեր սիրութ ահօվդո-
 ղով կը լնու, ու քու մեզի տուած
 կեանք կ'ուզէ մեզմէ առնել:
 Գիտեմ որ աշխարհիս մէջ առանց
 քու ամենասուրբ կամքիդ բան մը
 չըլլար, ու զիտեմ որ քու թող
 տալովդ աս չարիբը, աս մահտա-
 բաժամը մեր վրայ եկաւ ու մեզ
 կը նեղէ. բայց ես քու անսահ-
 ման ողորմութեանդ ու հայրական
 սրտիդ վրայ յուսալով՝ կ'աղաչեմ
 քեզի որ եթէ քու կամքդ է՝ աս
 նեղութիւնն ու փորձանքը մեզմէ
 հեռացընես, զմեզ աս մահտարա-
 ժամէն, աս մէծ հիւանդութենէն
 աղատես: Գիտեմ որ մենք մեր

մեղքերովը ասանկու ասկից հազար
 հեղ աւելի մեծ պատիժներու ար-
 ժանի ենք . բայց դուն մեղաւորին
 մահը չես կամենար, հասկա կ'ուզես
 որ ասլըի, քեզի դառնայ ու ասլաշ-
 խարէ : Անոր համար սլահէ զմեզ
 առ մահուան վտանգէն ալ . լսէ
 սուրբ կոյս Սստուածածնայ ու ա-
 մէն սուրբերուն, մանաւանդ մեր
 սուրբ Հօրբ Գրիգոր Լուսաւորչին,
 սուրբ Յակոբ Մծրնացիին ու սըս-
 րուհի Հռիփսիմէ կուսին խնդրը-
 ւածքին, որոնք մեզի համար քեզի
 կ'աղաջեն երկինքը, որ զմեզ ամէն
 շար հիւանդութիւններէն ու ամէն
 վտանգներէն ազատես, որպէս զի
 մեզի տուած կեանիքդ քու ծառա-
 յութեանդ մէջը հոգեւոր ու
 մարմնաւոր խնտումով անցընելէն
 ետքը՝ սուրբ ու խաղաղական մա-
 հուամբ դանք օր մըն ալ իրենց
 հետ մէկտեղ քեզի դուշութիւն մա-
 տուցանենք յաւիտեանս յաւիտե-
 նից . ամէն :



ԶԱՆԱԶԱՆ ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՍԴՈԹՔՆԵՐ

ԱԴՕԹՔ

Սուրբ Յովհաննէս Միքայէլ :

Առաջ Յովհաննէս Մկրտիչ ու Կո-
րապետ, որ Աստուծմէ ընտրուե-
ցար մարդկան փրկչին աշխարհք
գալը մեզի ծանուցանելու ու մեր
սիրան անոր պատրաստելու հա-
մար, ու անչափ մեծ սրբութեան
հասար՝ որ ինքը Աստուծոյ որդին
իր աստուծային բերնովն ըստ
թէ քեզմէ մեծ սուրբ դեռ չէ
եղեր. ահա ես քու հզօր բարե-
խոսութեանդ կարօտելով՝ մեծ ա-
զերսանքով կ'աղաշեմ քեզի որ ին-
ծի Աստուծմէ շնորհք առնես աս
պզտիկութեանս ժամանակը քեզի
նման ըլլալու, քեզի պէս աշխարհ-
քէն ու աշխարհային ուրախութե-
նէն փախչելու, ու ժամանակս աւե-
լի Աստուծոյ ծառայութեան ու

Հոգեւոր գործքերու մեջ՝ քանի թէ
 աշխարքիս սուտ խնդութեանը մեջ
 անցընելու։ Օգնէ ինծի քու բա-
 րեխօսութեամբող որ քեզի ոլես սի-
 րով պահք պահեմ, ինքը զինքս ու-
 տելու խմելու չտամ, քիչ ըանով
 գոհ ըլլամ, ու թէ որ բան մը իմ
 կամքիս գեմ կ'ըլլայ՝ չարտնջեմ
 շդանդատեմ։ Առ ինծի առաս
 շնորհք Յիսուսէն՝ որն որ դուն քու
 սուրբ ձեռօքդ միրտեցիր, որ պզտի-
 կուց սկսիմ ասլաշխարանք ընելու
 մեղքերուս համար, ու քու քարո-
 զած ասլաշխարութեան ճամբովդ
 արքայութեան համնիմ։ Բարեխօս
 եղիր ինծի համար Աստուծոյ առ-
 ջեւը, որ ես ալ սկսիմ պզտիկուց
 իմ փրկիչս Յիսուս Քրիստոսը աղեկ
 ճանշնալու, ինչպէս որ դուն զինքը
 ճանշցար ու քարոզեցիր. ու իրեն
 ուսմունքն ու խրատները յօժա-
 րութեամբ ու եռանդով սորվիմ
 ու պահեմ, որ արժանի ըլլամ
 զինքը արքայութեան մեջը քեզի
 ու ամէն սուրբերուն հետ միշտ
 օրհնելու, ամէն։

ԱՂՋԻՔ

Սուրբ Յակովի Աստվածահօք :

Վաճառեցանիկ պահապահն իմ վըրկ-
չիս Յիսուսի ու սուրբ կոյս Աս-
տվածածնայ ամենամաքուր փե-
սան սնւրը Հայր Յովսէփ, Երբ որ
ան մեծ վառքն ու պատիւը կը
մտմտամ՝ որուն արժանի եղար,
աշխարհքին վրկչին Հօր տեղը բըռ-
նելով՝ սիրտս անպատմելի ուրա-
խութեամբ կը լեցուի ու շնորհակալ
կ'ըլլամ Աստվածոյ՝ որ քեզ ասանկ
վառաւորեց : Աքանչելի Աստվա-
ծահայր, զիտեմ աղէկ որ գուն մի-
այն ան տղաքը կը սիրես՝ որոնք քու-
մանուկ Յիսուսիդ նման ըլլալու,
անոր պէս սուրբ ասպրելու ու զԱս-
տված սիրելու կ'աշխատին . ասոր
համար հիմա խռնարհութեամբ
կ'աղաչեմ քեզի՝ որ ինձի առաս
շնորհք առնես քու սիրական Յի-
սուսիդ՝ իրեն պէս սուրբ ու ան-
մեղ ասպրելու, ու իմ ձնողացու,
վարպետներուս ու մեծերուս Հնա-
զանդ ըլլալու, ինչպէս որ ինքը

Յիսուս քեզի ու սուրբ կոյս Աստուածածնայ միշտ հնագանդ էր :
 Խնդրե քու սիրելի Յիսուսէդ՝ որ
 ինձի շնորհք տայ ամեն առեն սի-
 րով ու խնդութեամբ սուրբ եկե-
 ղեցին երթալու, ինչպէս որ ինքը
 իր ալզտիկութեանը ժամանակը քե-
 զի հետ տաճարը՝ իր երկնաւոր Հօ-
 րը տունը կ'երթար : Օդնէ ինձի,
 սուրբ հայր Յովսէփի, որ քու Յի-
 սուսիդ պէս ջերմեռանդութեամբ
 աղօթքը ընեմ. աղօթքի առեն սիրտու,
 միտքս ու ինքը զինքս բոլոր Աս-
 տուծոյ տամ . բերանս սորվեցը-
 նեմ ամեն բանի մեջ զԱստուած օր-
 հնելու . բարի խօսքերով իրեն սի-
 րելի ըլլալու, ու ոչ մեկ գեշ կամ
 անկարգ զրոյցք մը բերնէս հանե-
 լու : Երջանիկ Աստուածահայր, քու
 Հզօր պաշտպանութեանդ կը յանձ-
 նեմ իմ հայրս ու մայրս, իմ եղ-
 բայրներս, քոյրերս ու ամեն բարե-
 բարներս ալ՝ որ իրենց օգնես յաւի-
 տենական ուրախութեան համեն-
 լու : Ո՛վ երանաշնորհ սուրբ հայր
 Յովսէփի, դուն ինձի հետ եղիր կե-

նացս ամեն օրը ինչպէս իմ ամենաս-
սիրելի հայրս ու պահապանս, ու
պահէ զիս ամեն հոգեւոր ու մարմ-
նաւոր փորձանքներէն, վտանգաւոր
տեղերէն ու ամենեն աւելի՝ մա-
հուչափ մեղքէն։ Ըստրհք առ ինծի
Աստուծմէ, որ ամեն իժիր մեծ
ջերմեռանդութեամբ ըսեմ Յիսուս
Մարիամ ու սուրբ Յովանէփ, իմ հո-
գիս, սիրառ ու մարմինս ձեզի կը
յանձնեմ ու կու տամ։ Մահուան
ժամանակն ալ քու հզօր բարե-
խօսութեամբդ ինծի օդնութիւն
հասիր, որ աղէկ պատրաստու-
թեամբ յանձնեմ հոգիս իմ փրկչիս
ձեռքը, ու դամ երկինքը քեզի
հետ Աստուծ տեսնեմ ու օրհ-
նեմ. ամեն։

ԱՆՕԹԻ

Սուրբ Յակովի և Արքունիկ
Անապին։

Աերելի նախածնողք Յիսուսի
քրիստոսի իմ Փրկչիս, ու ծնողք
սուրբ կոյս Աստուծածնոյ՝ սուրբ

Յավակիմ ու սրբուհի Աննա, ան
 խնդութեան համար՝ զոր ունեցաք
 տեսնելով ձեր ամենօրհնեալ գուս-
 տրը՝ սուրբ կոյս Մարիամը՝ Աստու-
 ծոյ որդւոյն մայր Եղած, նայեցէք
 իմ վրաս դժած աչքով ու շնորհը
 առէք ինծի Աստուծմէ, որ ես ալ
 ամեն ժամանակ առանց մեղքի
 ապրելով՝ կարող ըլլամ սրտիս մէջը
 հոգեւոր ու երկնաւոր ուրախու-
 թիւն ունենալ: Բարեխօս Եղէք
 ինծի համար Յիսուսին, որ ինծի
 շնորհը տայ իմ կեանքս բոլոր իրեն
 նուիրելու, իրեն ծառայութեանը
 մէջը սիրով եւ ուրախութեամբ
 մնալու, ու ոչ օր մը մեղքով իրմէն
 հեռանալու: Մի թողուք զիս՝ որ
 պզտիկուց ըրած խոստմննիքներս
 մոռնալով՝ մեղաց ճամբան բռնեմ
 ու Աստուծոյ, սուրբ Աստուծու-
 ծնայ ու ձեզի ատելի ըլլամ: Բարե-
 խօս Եղէք ինծի համար Աստուծոյ՝
 որ պզտիկուց սկսիմ իմ փրկչիս Յի-
 սուսին վարքը մտածելու ու աշ-
 խատիմ իրեն նմանելու, եւ իրեն
 խրատներն ու աստուծային ու-

սումները սրատանց սորվելու ու պա-
 հելու : Ընորհք տռէք ինծի որ ես
 աւ պզտիկուց իմ կեանքս Աստու-
 ծոյ նուիրեմ, սիրտս բոլորովին աշ-
 խարհքէն վերցընեմ ու Աստուծոյ
 տամ, ինչպէս որ ձեր ամէնօրհնեալ-
 դուստրը՝ սուրբ Աստուածածին ը-
 բաւ, ինքը զինքը երեք տարեկան Աս-
 տուծոյ ընծայելով տաճարին մէջը:
 Նաեւ կ'աղաշեմ ձեզի, Երանելի
 ծնողք սուրբ Աստուածամօրը, որ
 ծնողացս, Եղբարցս ու քրութացցս
 համար ալ շնորհք առնեք Աստուծ-
 մէ ձեր բարեխօսութեամբը, որ
 անմեղութեամբ ապրին, Աստուծոյ
 ծառայեն, իրենց կեանքը առանց
 փորձանքի ու նեղութեան անցընեն
 ի փառս Աստուծոյ ու արքայու-
 թեան արժանի ըլլան: Աղաշեցէք
 ձեր ամէնօրհնեալ դստերը՝ սուրբ
 կոյս Աստուածածնայ, որ մեր մա-
 հուան ատենը իր Աստուածորդւո-
 վը մէկտեղ մեր քովը մնայ, ու զմեզ
 սատանային փորձանքներէն պահե-
 լով յաւիտենական կենաց հասցը-
 նէ, ամէն :

ԱՆՕԹԻՔ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՀՕՐԸ ԳՐԵՒԹՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԸՆ :

Հայաստանեայց հայր հոգեւոր, իմ
աստուածարեալ ու հոգեւոր ծնողս
երջանիկ սուրբ Գրիգոր Լուսաւո-
րիչ, որ երկայն ժամանակ մեծ
մեծ տանջանքներ քաշելով ու ա-
րիւնդ թափելով՝ մեզի Քրիստոսի
տեառն մերոյ սուրբ հաւատքը բե-
րիր, զմեզ սուրբ ու կաթուզիկէ ե-
կեղեցւոյ որդիքն ըրիր ու արքայ-
ութեան ճամբուն վրայ դրիր, ինչ-
չափ շնորհակալ ըլլալու պարտա-
կան եմ Աստուծոյ՝ որ զքեզ մեզի
հոգեւոր հայր ու վարդապետ շնոր-
հեց : Ի՞նչչափ պարտական եմ սի-
րելու իմ վրկիչս Յիսուս Քրիստոս՝
որ զմեզ քու ձեռքովդ ճշմարիտ
հաւատացեալներ ըրաւ : Աս ովար-
տըկանութիւններս ես ինքիրմէս
շկրնալով կատարել՝ կ'աղաքեմ քե-
զի, իմ հոգւոյս լուսաւորիչը, քու
հզօր բարեխօսութեամբդ օգնէ ին-
ծի որ կարենամ իմ գործքերովս

ցուցընել ճշմարիտ աստուածա-
 պաշտ, ուղղափառ քրիստոնեայ ու
 Յիսուսի Քրիստոսի իմ Փրկչիս հե-
 տեւող ըլլալս: Չըլլայ որ քու ինձի
 սորվեցուցած հաւատքդ պահելով՝
 բայց գործքովս քու ցուցուցած
 ճամբեղ չքալելով՝ ունեցած հաւ-
 ատքս ալ պարապ ըլլայ: անոր հա-
 մար ինդրէ Աստուծմէ ինձի հա-
 մար ալ ան շնորհքը՝ որուն ուժովը
 դուն, աստուածային սուրբ հայրա-
 պետ, տեսակ տեսակ տանջանքներ
 քաշեցիր ու քու հաւատքիդ հաս-
 տատութիւնը բոլոր աշխարհքին
 յայտնեցիր, որպէս զի ես ալ չէ
 թէ միայն քու հոգեւոր որդիդ ու
 աշկերտ ըսուիմ, հազար գործքով
 ալ քեզի նմանիմ: Առ ինձի Աս-
 տուծմէ շնորհք՝ որ պզտիկուց սկսիմ
 Քրիստոսի սուրբ հաւատքին մա-
 սունքը՝ քու մեզի սորվեցուցածիդ
 պէս՝ աղեկ միտք առնել եւ ուրիշ-
 ներուն ալ սորվեցընել: Օրհնէ զիս,
 հայր սուրբ, որ աս աշխարհքիս մէջ
 ինքը զինքս մեղքերու ու դեշու-
 թիւններու չտամ, երկինքը քու

ու հրեշտակաց ընկերութիւնը
չկորսնցընեմ ու Աստուծոյ տեսու-
թենէն չզրկիմ։ Օրհնէ զմեզ, մեր
ազգը՝ որն որ քու տանջանքներումդ
անհաւատութեան մէջէն հանեցիր
ու սուրբ Հաւատոյ լուսովը լուսա-
ւորեցիր։ Բարեխօս եղիր ամե-
նուս Համար՝ որ խաղաղութեամբ
առլրինք, ճշմարիտ ուղղափառ հա-
ւատորով, սուրբ սիրով ու Հաս-
տատ յուսով կետնքերնիս անցը-
նենք, յաւիտենական ուրախու-
թեան հասնինք ու քեզի հետ օրհ-
նենք անվախճան ամենասուրբ Եր-
բորդութիւնը։ ամեն։

ԱԿՈԹԻՔ

Սուրբ Յովան Մշբնոյ հոյրապետին։

[♦] բաշագործ սուրբ Հայրապետ, որ
քու անմեղ ու ճգնաւորական վար-
քովդ ու մեծ սրբութեամբ երկ-
նից հրեշտակներուն նմանեցար,
ու հիմա արքայութեան մէջը յաւ-
իտենական ուրախութեամբ կը
խնդաս, կ'աղաչեմ քեզի՝ մի մռանար

զիս ալ, ու բարեխօս Եղիր ինծի
 համար ամեն ժամանակ Յիսուսի
 Քրիստոսի՝ որ իմ վրայէս իր առաստ
 շնորհքը պակաս չընէ՝ որ առանց
 մեղքի օրերս անցընեմ։ Դուն աշ-
 խարհքիս վրայ քու սուրբ խրատ-
 ներովդ ու յորդորանքներովդ մե-
 զաւորները Աստուծոյ կը դարձը-
 նէիր ու Աստուծոյ զօրութեամբը
 մեծ հրաշքներ կ'ընէիր։ Հիմա ալ
 երկինքը ինծի համար բարեխօս Եղիր
 Յիսուսին, որ իր շնորհքովդ զիս
 մեղքէն ազատէ ու գեշ սովորու-
 թիւններէն, ստախօսութենէ ու
 անվայել զրոյցքներէն պահէ։ Ին-
 ծի համար շնորհք առ՝ որ զամեն
 մարդ՝ թէ ինծի աղեկութիւն ընող-
 ները ու թէ գեշութիւն ընողները
 Աստուծոյ սիրոյն համար սրտանց
 սիրեմ, ձեռքէս եկածին չափ ամե-
 նուն աղեկութիւն ընեմ ու իրենց
 համար Աստուծոյ աղօթեմ։ “Նաեւ
 օդնութիւն հասիր ինծի ու ամենուն
 հիւանդութեան մէջ, մանաւանդ
 մահարաժամի առեն։ պահէ զմեզ
 առ ծանր հիւանդութենէ, որ չըլլայ

թէ ահու դողու մէջ անցընենք Աստուծոյ մեզի տուած կեանքը ու ցաւալի մահով կամ յանկարծակի անպատճառ մեռնինք։ Օրհնել զմեզ, հայր սուրբ, պահէ մեր ազգը ամեն հոգեւոր ու մարմնաւոր չարիքներէն, որ ամեն իժիր քեզի պէս Աստուծոյ ծառայենք, ու Երկինքն ալ քեզի հետ ուրախանանք յախտեանս յաւիտենից։ ամեն։

Շաբախն։

Չարժանահաս մահ տարաժամ ի ցաւմանէ քում հրամանի բարձ ի մէջ բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Յակոբայ, Տէր Աստուծ հարցն մերոց։

ԱՆՕԹԻՔ

Սուրբ Անդոն ճկնաւորին։

Խուրբ հայր Անտոն, ճգնաւորներուն ու Աստուծոյ մէծ ծառաներուն զլուխն ու հայրը, դուն քուպզտիկութեանդ ատենը Քրիս-

տոսի տեառն մերոյ խրառը մտիկ
 ընելով՝ քու տունդ ու հարսառւ-
 թիւններդ թողուցիր ու աշխարհ-
 քէն եւ քաղուեցար՝ մեծ մեծ
 ճգնութիւններով Աստուծոյ ծա-
 ռայելու համար, ու անով նոր ճամ-
 բայ մը ցուցուցիր մարդկանց ար-
 քայութիւն երթալու։ Սրտանց կը
 փափազիմ, Հայր սուրբ, իմ աս
 պղափիկութեանս ատենը քեզի նմա-
 նելու, իմ փրկչիս Յիսուսին ու քու
 ետեւեղ գալու, քեզի պէս բոլոր
 սրտանց Աստուծոյ ծառայելու ու
 Աստուած սիրելու։ Ինձի համար
 Յիսուսէն շնորհք խնդրէ որ ես ալ
 քեզի պէս սուրբ Աւետարանին խօս-
 քերն ու խրատները մտիկ ընեմ ու
 անոնք կատարեմ։ Թէ որ գեռ շեմ
 կրնար քեզի պէս աշխարհքն ու
 իմ ծնողքս թող տալ ու մար-
 դիկներէն հեռացած մինակ ապրիլ
 ու ճգնութիւն ընել, գոնէ շնորհք
 առ ինձի Աստուծմ, որ սիրտս
 պղափիկուց աշխարհքի հետ չկապեմ
 ու աշխարհքին ուրախութիւննե-
 րուն ու խաղերուն ետեւեն չըլ-

լամ. Հասկա ինքը զինքս Աստու-
ծոյ տամ ու ամեն դործքս Աստու-
ծոյ սիրոյն համար ընեմ: Ճնորհք
առ ինձի՝ որ իմ ձնողացս, վարպետ-
ներուս ու մեծերուս ամեն իժիր
Հնազանդ ըլլամ ու իրենց դեմ
չխօսիմ, ինչպէս որ դուն քու աշ-
կերտներուդ կը պատուիրէիր: Ո՛վ
սուրբ Հայր Անտոն, դուն մարդկան
համար մեծ բարեխօս ու օգնական
ես կրակի ատեն. անոր Համար կ'ա-
ղաշեմ քեզի՝ որ զմեզ, մեր բնակու-
թիւններն ու ամեն աեղ կրակի
փորձանքէն պահես. բայց աւելի
հոգեւոր կրակէն, այսինքն՝ յաւի-
տենական դժոխքէն ազատես զմեզ
քու զօրաւոր աղօթքովդ, որ եր-
կինքը մեզի պատրաստած ուրա-
խութեան հասնինք, ու քեզի հետ
յաւիտեան ցնծանիք ի փոռա Աս-
տուծոյ. ամեն:

ԱՂՕԹՔ

Սուրբ Գրեգոր Նորիացոյն:

Աստուծարեալ սուրբ վարդա-
պետ, եռամնդուն սիրող Յիսուսի ու

սուրբ կոյս Աստուածածնայ, որ
 ամեն ժամանակ Աստուածոյ սիրովը
 Եցուած սքանչելի աղօթքներով
 Երկնից հրեշտակներուն պէս աշ-
 խարհքի վրայ քու արարչիդ հետ կը
 խօսէիր, կ'աղաշեմ քեզի այսօր՝ որ
 քու ջերմուանդութեանդ մէկ մասը
 ինծի համար խնդրես քու սիրե-
 լոյդ Յիսուսէն, որ ևս ալ քեզի
 պէս եռանդով աղօթք ընեմ։ Առ
 Յիսուսէն ինծի համար աստուա-
 ծային սիրոյն եռանդը՝ որ պզտի-
 կուց քեզի պէս իմ փրկչիս Յիսու-
 սին հետ սիրով մէկ ըլլամ ու սիրտս
 բոլոր իրեն տամ։ Խնդրէ ինծի
 համար ճշմարիտ ցաւ, զղջում ու
 արցունք՝ որ զԱստուած արդոգ-
 ծընելուս համար լամ ու ապաշ-
 խարանք ընեմ, ինչպէս որ դուն քու
 սքանչելի աղօթազրբիդ մէջը մեզի
 կը ցուցընես։ Բարեխօս եղիր ին-
 ծի համար Յիսուսին, որ զիս ար-
 ժանի ընէ քեզի պէս խոնարհ, հեզ
 եղբայրառեր ու առարինի ըլլալու
 ու անով ու բիշներուն բարի օրինակ
 տալու։ Առ ինծի Աստուածմէ ա-

Նանկ հոգեւոր փախադ ու եռանդ
մը՝որ ազօթքի եւ ուրիշ բարի գործ-
քերու մէջ ձանձրութիւն չունե-
նամ, հապա սիրով սուրբ եկեղե-
ցին երթամ ու ազօթեմ, երդեմ ու
պատարագ տեսնեմ, որ օր մըն ալ
երկինքը քեզի հետ իմ արարիչս ու
փրկիչս տեսնելու արժանի ըլլամ.
ամեն :

ԱՂՕԹՔ

ԲԵՐՈՒՀԵԴԻ անմեղ մանիսանքներուն :
Այուրբ եկեղեցւոյ սրանչելի՝ զաւկը-
ներն ու պարծանիքը, սուրբ ու ան-
մեղ Մանկունիք, որ ձեր անմեղու-
թեան զարդը չկորսընցուցած ու
աշխարհի կէշութիւններէն ոչ մէկ
մաս մը ունենալով՝ արժանի եղաք
չէ թէ միայն Յիսուսի Քրիստոսի
ձեր փրկիչն համար՝ հապա իրեն տե-
ղը ձեր արիւնը թափելու. ու հի-
մա երկինքը, սուրբ մարտիրոսնե-
րուն հետ կ'ուրախանաք . խնդրե-
ցէք ինձի համար Յիսուսէն շնորհը
որ ես ալ աս պզտիկութեանս ժա-
մանակը առանց մեղքի անցընեմ ու

Ակրտութեան մէջ առած մաքրու-
 թիւնս պահեմ: Օգնեցէք ինձի՝ որ
 պզտիկուց պատրաստուիմ Քրիս-
 տոսի սուրբ Հաւատքին Համար ա-
 մէն նեղութիւնները յանձն առնե-
 լու, ու երբ որ սկզբք ըլլայ նէ՝ ի-
 ւեն Համար կեանքս ալ տամ ու
 արիւն թափեմ: Ընորհք առեք ին-
 ձի, իմ եղբարցս ու քրութոցս՝ որ
 Յիսուսի սիրոյն Համար մեր ծնո-
 շացն ու վարպետներուն հնազան-
 դինք, աստուածասեր ըլլանք ու
 լսած բարի խրատնիս գործքով կա-
 տարենք: Օգնեցէք մեզի ձեր Հզօր
 բարեխօսութեամբ՝ որ ամէն ի-
 ժիր արքայութեան փառքն ու Հոն
 տեղը ձեր ու ամէն սուրբերուն ու-
 նեցած խնտումը մտմտանք, ու ան-
 մեղ ասլրելով՝ մենք ալ գանք ձեզի
 ընկեր եւ ուրախակից ըլլանք ար-
 քայութեան մէջը ի փառս Աս-
 տուծոյ ու Յիսուսի Քրիստոսի մեր
 Քրիչին, ամէն:

ԱԴՅՈՅԻՔ

ԱՐԵՎԱԿԻ ՀԵՐԵՎԱԿԻ ԽԱՆԱՔՆ :

Ամենասովորելի գուստոր Յիսուսի մեր
փրկչին, երջանիկ կոյս Հռիփսիմե,
որ մանկութեան հասակի մեջ աշ-
խարհը թողուցիր, անոր ուրախու-
թիւններէն ես քաշուեցար, ու
սուրբ կոյս Աստուածածնայ պետ
կեանքդ վանքի, կուսաստանի մեջ
Աստուծոյ նուիրեցիր, նաեւ թա-
գաւորական պատիւր, մեծութիւնն
ու անցաւոր խնտումը չուզեցիր
ընդունիլ, որ չըլլայ թէ Աստո-
ծոյ սէրեն հեռանաս. երնելի եր
ինծի՝ թէ որ ես ալ կարենայի քեզի
նման ըցլալ: Դուն ինծի երկին-
քէն օգնէ որ քու ճամբուդ հետե-
ւիմ. իմ Յիսուսիս սիրոյն համար
աշխարհը ու իր ամեն ուրախու-
թիւնները մոռնամ, անոր պատիւ-
ներուն ու մեծութիւններուն սէր
չձգեմ: Թէ որ մէկը ինծի զա-
նազան պատիւներ ու խնտումներ
խոստանալով՝ կ'ուզէ զիս աշխարհ-
քին սիրովը կազել՝ գուն ինծի օդ-

նութիւն հասիր, ոուրբ կոյս չոփփ-
սիմէ, որ իրեն դեմ կենամ ու իր-
մէ շխաբուիմ։ Պահէ զիս քու
զօրաւոր բարեխօսութեամբ շար
սատանային փորձութիւններէն ու
մեղքի վտանգներէն։ Խնդրէ Յի-
սուսէն ինծի համար շնորհք՝ որ
միայն աստուածային ու հոգեւոր
բաներու սեր ձգեմ, ու ան ան-
ձինքը աւելի սիրեմ՝ որոնք ինծի
կ'օդնեն։ Աստուածոյ աղեկ ծառայե-
լու ու արքայութիւն երթալու։ իսկ
աշխարհային շահի ու սուտ վայել-
չութեան համար ոչ մեկ անձ մը ու
բան մը սիրեմ։ Օդնէ ինծի՝ որ
Քրիստոսի ուզածին պէս աշխարհ-
քիս մեջ լամ ու սուգ ունենամ, որ
եր տուած երանութեան ու երկ-
նից յաւիտենական ուրախութեա-
նը հասնիմ։ ամէն։

ԱՂՕԹԻ

ԱՆ Ասւընին՝ որուն անունն առնի
աղօնտ ընողը։

Եցրջանիկ սուրբդ Աստուածոյ, Յի-
սուսի Քրիստոսի ծշմարիտ աշկեր-

տը, որ աշխարհքիս վրայ տեսակ
 տեսակ առաքինութիւններով ու
 սրբութեամբ առգրելով՝ քու երկ-
 նաւոր դատաւորէդ՝ Աստուծմէ
 վարձքդ առիր, ու Հիմա յաւի-
 տենական ուրախութեան մէջը կը
 հանդիս. ահա ես քու սուրբ ա-
 նունդ միրտութեանս ժամանակը
 վրաս առած ըլլալով՝ մասնաւոր
 յուսով մը կը համարձակիմ քեզի
 դիմելու ու աղաչելու՝ որ զիս քու
 պաշտպանութեանդ տակ առնես,
 ամեն ժամանակ ինծի հետ ըլլաս
 ու ինծի համար Աստուծոյ աղաչես՝
 որ իր մեծ շնորհը իզմէ պակաս
 չընէ: Բարեխօսէ ինծի համար՝ որ
 պզակիկուց սկսիմ բարի վարքովս
 պատիւ ընել քու սուրբ անուանդ
 որ իմ վրաս դրուած է. որով չէ թէ
 միայն քեզի անուանակից ըլլամ
 հապա դործակից առաքինութեանց
 մէջ: Օգնական եղիր ինծի՝ որ բոլոր
 սրբանց աշխատիմ առաքինու-
 թեան ճամբուն վրայ առաջ երթա-
 լու. ամեն ժամանակ միտքս պահեմ
 իմ վրկչիս Յիսուսին ըսածը, թէ

Նայեցէք ինձի որ խոնարհ ու հեղ
որտով եմ. խաչերնիդ առէք ու ե-
տեւես եկէք, որ կարենաք հոգինիդ
շահիլ: Գրիտեմ որ եթե իմ խաչովս,
այսինքն՝ նեղութիւններ քաշե-
լով, համրերութեամբ քրիստոսի ու
քու ետեւեդ կու գամ նե՛ ան ա-
տենը Աստուծոյ ու քեզի սիրելի
կ'ըլամ: Ահա քու օգնութեամբդ
այսօր միոքս կը դնեմ առ բանս
կատարելու ջանալ, որ կարող բլ-
լամ իմ փրկչիս շնորհքովը առանց
մեղքի կեանքս լինցընել ու քեզի
ողես յաւիտենական ուրախութեան
հասնիլ: ամէն:



St. John the Baptist

ՄԱՀՈՒՄՆ ՊԱՏՐՍՍՅՈՒԹԻՒՆ
ԱՊԵՀԱՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԵՌԵ-
ԼՈՑ

ԱՆՕԹՔՆԵՐ

ԱՆՕԹՔ

Ծանր հիւանդութեան մէջ :

Յիսուս Քրիստոս Աստուած իմ,
որ ինձի համար մարդ եղար, չար-
շարեցար ու խաչին վրայ մեռար,
ողորմէ ինձի հիմա աս ծանր հիւ-
անդութեանս մէջը՝ որով կը չար-
շարուիմ ու կը մաշխմ։ Իրաւցընէ,
Տէր իմ Յիսուս, դեռ քիչ ապրե-
ցայ աշխարհիս վրայ, բայց աս
պղտիկութեանս ժամանակը զանա-
զան մէջքեր ընելով՝ արժանի ե-
ղայ քեզմէ ասնեղութիւնը, աս հիւ-
անդութիւնն ընդունելու, որ մէջ-
քերուս ապաշխարանքը քաշեմ։
Թէ որ դուն մէջք մը, յանցանք մը
շունենալով՝ իմ մէջքերուս հա-
մար անչափ ցաւեր ու տանջանքներ
քաշեցիր, ես ինչպէս կրնամքան-
քատել իմ ցաւերուս վրայ՝ որ

իմ մեղքերուս համար կը քաշեմ։
 Չէ, Տէ՛ր Յիսուս, չեմ քանիքա-
 տեր՝ որ հիմա առ մատադ հասա-
 կիս մէջ ասանկ յաւերով կը տան-
 ջուիմ, հասկա անոնց համար քեզի
 սրտանց շնորհակալ ըլլալեւս ետքը՝
 կ'աղաշեմ որ ինձի համբերութիւն
 տաս անոնք սիրով ու խնտումով
 քաշելու, որ մարմնոյս յաւերովը
 հոգիս մեղքերեն մաքրուի ու սուրբ
 ըլլոյ։ Ո՞վ սիրական Յիսուս, զիս
 մինակ մի թողուր առ յաւերուս մէ-
 ջը, հասկա քու զօրաւոր շնորհ-
 քովդ ու անուշ միսիթարութեամբոց
 եկու ինձի ու իմ հետա եղիր, որ կա-
 րենամ ինչուանիմ մահս համբերել։
 Տէ՛ր իմ Յիսուս, առ մեծ յաւերուս
 մէջը մինակ դուն ես իմ յոյսս ու
 խնդութեանս պատճառը, անոր
 համար իզմե մի հեռանար որ յա-
 ւերս աւելի սաստիկ չերեւան ինձի։
 Ու եթէ քու կամբոց է՝ որ առ հի-
 ւանդութեամբ կեանքս լինցընեմ,
 մեռնիմ, առուր ինձի շնորհք, որ
 մեղքերս աղէկ խոստովանիմ ու քու
 սուրբ մարմնոյդ հաղորդիմ, եւ

ասանկով հոգիս բոլորովին մաքուր
ու սուրբը լլալով՝ մարմնէն զատուե-
լուն պէս՝ շիտակ երկնից արքայ-
ութիւնը դայ զքեզ յաւիտեանս
յաւիտենից դովելու համար . ամէն :

ԱՆՕԹԻ

Մահուան պատրաստություն համար :

Այրական Յիսուս, իմ ողորմած
փրկիչս ու հայրս, ահա հիւանդու-
թիւնս կը ծանրանսյ, ցաւերս կը
սաստկանան ու կը տեսնեմ որ կը
մօտիկնայ ան ժամանակը, ան ժամը
որ պէտք է ինձի առ աշխարհքը թո-
ղուլ, որուն վրայ մէկ քանի տա-
րի ապրեցայ: Դուն կ'ուզես, սիրե-
լի փրկիչ իմ, զիս առ աշխարհքէն
հանել, որ շըլլայ թէ աշխարհքին ու
սատանային շարութիւնը իմ միտքս,
իմ հոգիս քեզմէ դարձընէ, առնէ,
ու երկայն ապրելով ինքը զինքս
մեղքերու տամ: Ես ալ կը փափա-
գիմ, Տէր իմ, թողուլ առ սուտ
աշխարհքը, իմ սիրելի ծնողքս ու
ամէն մարդիկ ու քեզի դալ: Բայց

քանի որ դեռ խելքս գլուխս է՝ կը
 նուիրեմ քեզի մեղքերուս առաջ-
 խարանքին համար աս հիմակուան
 ցաւերս ու հոգեւարութեան ատեն
 ունենալու նեղութիւնս : Կը խրն-
 դրեմ քեզմէ՝ որ քու աստուածայ-
 ին ողսրմութեամբդ ան դժուար
 ատենը ինծի օպնութիւն հասնիս
 երբ որ հոգիս մարմնէս պիտի բաժ-
 նուի : Արժանի՛ ըրէ զիս, Տէ՛ր իմ
 Յիսուս, որ քու սուրբ մարմինդ ըն-
 դունելէն ու վերջին օծման սուրբ
 խորհրդով հաստատելէն ետքը
 հոգիս քու ձեռքդ աւանդեմ : Ո՛վ
 Յիսուս, սիրակա՞ն ու քաղցր Յի-
 սուս, իմ մէկ հատիկ բարեկամս,
 աս դժուարին նեղութեանս մէջ
 զիս չար սատանային փորձութիւն-
 ներէն պահէ : Խաւրէ քովս քու
 ամենասիրելի մայրդ սուրբ կոյս Աս-
 տուածածինն ու սուրբ հրեշտակ-
 ները, որ իմ հոգիս առնեն երկին-
 քը սերեն : Դուն զիս շատ սիրելուդ
 համար՝ զիս ուղղափառ քրիստոնէի
 զաւակ ըրիր, որ կարենամ քու
 ինծի պատրաստած յաւիտենական

ուրախութեանդ հասնիլ . ուստի
հիմա մի մոռնար զիս , որ չըլլայ թէ
քու շնորհքիդ մէջը չմեռնելով՝ աս
յաւիտենական ուրախութիւնը կոր-
ունցընեմ : Ո՞վ Աստուած իմ Յի-
սուս , դուն գիտես որ քեզի համար
կ'ապրէի , ինչուան հիմա քուկդ էի
ու զքեզ կը սիրէի . հիմա ալ կը փա-
փաղիմ քու սիրելիներուդ մէջն ըլ-
լալ . ինձի սուրբ մահ մը տուր . հի-
մակուան քաշած ցաւերուս նայե-
լով՝ ազատէ զիս յաւիտենական ցա-
ւերէն , ու յաւիտենական խնտու-
մի արժանի ըրէ քու սուրբերուդ
հետ , որ անոնց հետ ալ միշտ սի-
րեմ ու զովեմ զքեզ . ամէն :

ԱՆՕԹԻ

Հոգեւարութեան ժամանակ :

**Տէր իմ Յիսուս , քազցր փրկիչ հո-
գւյս , ահա հասայ մահուան դու-
ռը , կեանքիս ետքի ատենն է . տես
իմ նեղութիւնս ու օգնէ ինձի՝ որ
շուտով ազատիմ աս ցաւերէս ու
քեզի զամ :**

Սիրական վրեիլ իմ Յիսուս, յի-
շե քու ցաւերդ, չարչարանիքներդ,
մահուանդ նեղութիւնն ու հոդե-
վարութիւնդ՝ որ իմ մեղքերուս հա-
մար խաչին վրայ քաշեցիր. ու ե-
կու իմ քովս աս գժուարին վայր-
կենիս մէջ, որ կարենամ հոդիս հան-
գըստութեամբ քու ձեռքդ աւան-
դել:

Յիսուս վրեիլ աշխարհի, Յի-
սուս որդի Աստուծոյ, Յիսուս՝ իմ
աստուածային մսիթարիչ, թէ որ
գեռ վրաս մեղք մը ու պակսու-
թիւն մը կայ նէ՝ թողութիւն ըրե-
եւ ոյժ տուր հոգւոյս որ աս նեղու-
թիւնն ալ առաջխարսնիքի համար
համբերութեամբ քաշե, ու սուր-
բերուն հոգւոյն պէս շխատկ քեզի
թոշի գայ:

Սուրբ կոյս Աստուածածին, իմ
սիրական մայրս, մէկհատիկ բարե-
խօսս ու օգնականս, աս ծանր վայր-
կենիս մէջ ինծի օգնութիւն հասիր.
Հեռացուր քովես հոգւոյս թշնա-
միները. քու մայրական անուշ
տեսիլքովդ ուրախացուր հոգիս,

ու օգնէ ինծի որ սուրբ մահուամբ
ելլեմ աշխարհքէս ու քեզի հետ
քու սիրական որդւոյդ արքայու-
թիւնն երթամ:

Իմ սիրելի պահապահն հրեշտակս,
ու սիրելի բարեխօսներս՝ սուրբ
Հայր Յովուէփ ու սուրբ Գրիգոր
Լուսաւորիչ, հասէք հիմա ինծի օդ-
նութիւն, մնացէք իմ քովս ու օգ-
նեցէք ողորմելի հոգւոյս՝ որ առանց
մեղքի մարմնէս զատուի ու շիտակ
արքայութեան փառացը մեջը մըտ-
նէ, ու ձեզի հետ զԱստուած տես-
նէ, սիրէ ու օրհնէ:

Ամենասուրբ Երրորդութիւն՝
Հայր, Որդի ու Հոգի սուրբ Աս-
տուած, իմ ողորման ստեղծիչս,
փրկիչս ու բարերարս, կեանքիս աս-
եաբի վայրկենին մեջը կը նորոգեմ
իմ ճշմարիտ հաւատքս, հաստատ
յոյսս ու մեծ սերս քու վրադ,
ու կ'ուզեմ աս հաւատքով, յուսով
ու սիրով հիմա հոգիս աւանդել
ու մեռնիլ:

Տէր իմ Յիսուս, ինծի համար
խաչեալ Յիսուս, քաղզորիկ Փրկիչ

իմ Յիսուս, առ Հոգիս: Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ:

Յիսուս, Մարիամու սուրբ Յովսէփ, Հոգիս ձեր ձեռքը կու տամ:

Սիրական Աստուած իմ Յիսուս, սիրելի մայր իմ Մարիամ, ահա ձեզի կու դամ, ու ձեզի հետ կ'ուզեմ բլլալ Երկինքը յաւիտեանս յաւիտենից . ամեն :

ԱՆՕԹԻՔ

Ապաշխարսութեան :

Տէր ամենակալ Աստուած Արքահամու, Խսահակայ, Յակոբայ Եւզաւակի նոցա արդարոց . ամենակալ **Տէր** Ծող զմեցս իմ:

Որ արարեց զերկինս եւ զերկից Եւ զամենայն զարդ նոցա . ամենա:

Որ կապեցեց զծով բանիւ հրամանիքո, փակեցեց զխորս, կնքեցեց ահաւոր եւ փառաւորեալ անուամբ քով սրբով . ամենա:

Որ ամենայն ինչ սարսի եւ դոզայ յերեսաց ահի զօրութեան քո . ամենա:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քո, եւ սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց . անչափ եւ անքնին են ողորմութիւնք աւետեաց քոց . ամենա :

Դու Տէր բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ շարեաց մարդկան . ամենա :

Դու Աստուած, ոչ եղիր ասլաշխարութիւն վասն արդարոցն Արքահամու, Խսահակայ եւ Յակոբայ, որք ոչ մեղան քեզ . ամենա :

Այլ եղիր ասլաշխարութիւն վասն իմ մեղաւորիս . զի մեղայ աւ ելի քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ . ամենակալ :

Չեմ արժանի հայել եւ տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ . ամենակալ :

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից, եւ ոչ գոինձ հանգիստ . ամենա :

Բարկացուցի զսրտմառութիւն,
Եւ զչար առաջի քո արարի, կանգնեցի
պատկեր Եւ բազմացուցի զցա-
ռումն . ամենա :

Եւ արդ , Տէր , խոնարհեցուցա-
նեմ զծունը օրտի իմոյ , Եւ հայցեմ
ի քաղցրութենե քումք . ամենա :

Մեղայ , Տէր , մեղայ , Եւ զան-
օրէնութիւնս իմ ես ինձէն զիտեմ .
ամենա :

Աղաչեմ Եւ խնդրեմի քեն , թող
ինձ , Տէր , թող ինձ . Եւ մի կորու-
սաներ զիս ըստ անօրէնութեան ի-
մոյ . ամենա :

Մի յաւիտեան բարկանար ինձ ,
Տէր . Եւ մի յիշեր զչարիսն իմ , Եւ
մի ոլարտաւորեր զիս ընդ իջեալս
ի ներքոյ երկրի չարեօք . ամենա :

Զի դու , Աստուած , Աստուած
ապաշխարողաց ես , Եւ յիս ցոյց
զբարերարութիւնդ քո , զի անար-
ժան եմ . ամենա :

Կեցուսցես զիս ըստ բազում ո-
զորմութեանքում . Եւ ես օրհնեցից
զքեզ զամենայն աւուրս կենաց ի-
մոց . ամենա :

Զքեզ Տէր օրհնեն ամենայն
զուարթունք երկնից . Եւ քո Են
փառք յաւիտեանս . ամէն :

Փառք Հօր Եւ Որդւոյ Եւ Հոգ-
ւոյն սրբոյ :

Այժմ Եւ միշտ Եւ յաւիտեանս
յաւիտենից ամէն :

Աղաչեմ Եւ խնդրեմ ի քէն,
Տէր , թող ինձ զմեղս իմ :

Բազումողորմ Տէր , ողորմեաց
ինձ :

Աստուած , քաւեա զիս զմե-
շաւորս :

Արարիչ իմ Եւ յոյս Աստուած,
Կթա յիսի մեղուցեալ ծառայս , Եւ
ողորմեա ինձ բազմամեղիս :

Ամենօրհնեալ սրբուհի Եւ միշտ
կոյս Աստուածածին Մարիամ , բա-
րեխօսեա առ Տէր վասն իմ մեղա-
ւորիս :

Ամենայն սուրբք Աստուածոյ բա-
րեխօսեցէք առ Հայոց յերկինս վասն
մեր մեղաւորաց :

Քրիստոս որդի Աստուածոյ ան-
ոխակալ , ընկալ զաղաքանս մեր . զի
է քեզ Ենապաւինեալ անձինք մեր :

Յաղթող զօրութեամբ սուրբ
եւ կենդանարար, եւ պատուական
խաչիւ քով, Տէ՛ր, պահպանեա զմեզ:
Առաքեա, Տէ՛ր, զհրեշտակ խա-
զաղութեան քո. որ եկեալ սկա-
հեսցէ զմեզ անխռովս ի տուե եւ
ի գիշերի:

Եւ մարդասիրութեամբ քո յի-
շեա զմեզ, Տէ՛ր, յիշեա զմեզ, յոր-
ժամ գաս արքայութեամբ քով, եւ
ողորմեաց մեզ:

Քարոզ:

Եկեալքս ի խոստովանութիւն
ապաշխարութեան հաւատով զյոյս
միածնի. Որդւոյն Աստուծոյ դիցուք
ի սիրտս մեր, խնդրելով ի նմանէ
զքաւութիւն եւ զիմողութիւն
յանցանաց մերոց: Աւան զի նա
ինքն է նախախնամողն Աստուծ
յաւիտենական, որ եկն կամաւ Հօր
ի փրկել զարարածու, եւ տսաց զինքն
լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ա-
պաշխարողաց, շնորհելով հանգիստ
աշխատելոց, ընդունելով զծանրա-
բեռնեալքս եւ զտաժանեալքս մե-

Հօք յապաշխարութիւն քաւութեան Արդ՝ եկայք ամենեքե ան խռնարհեալ անձամբ, բեկեալ որտիւք անկցուք եւ լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ, զի անցուսցէ ի մէնջ զցասումն սլատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցու ողորմեա։

Աղօնեւ։

Տէր Աստուած փրկութեան մերոյ, որ ողորմածդդ ևս եւ գթած, երկայնամիտ, բազումողորմ, եւ զղանաս ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն։ Դու Տէր, առատ ողորմութեամբդ քով միսիթարեա զծառապքս քո եւ տուր սոցա տեղի ապաշխարութեան. հաշտեա մարդասիրութեամբ քո եւ արա զսոսա անդամս եկեղեցւոյ քում սրբոյ։ Որպէս զի առողջացեալք հսդւով խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ մտցեն յեկեղեցի քո

սուրբ : Եւ ընդ ժողովրդեան քում
քեզ հանցեն զօրհնութիւն եւ
զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգ-
ոյդ սրբոյ . այժմ եւ միշտ եւ յաւ-
իտեանս յաւիտենից . ամեն :

ՍԱՂՄՈՍ

Աղալիաբութեան :

Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի
ողորմութեան քում, եւ ըստ բա-
զում զթութեան քում քաւեա
զանօրէնութիւնս իմ :

Առաւել լուս զիս յանօրէնու-
թենէ իմմէ, եւ ի մեղաց իմոց սուրբ
արա զիս :

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն
զիտեմ, եւ մեղք եւ առաջի իմ են
յամենայն ժամ :

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ
զշար առաջի քո արարի :

Որպէս արդար եղիցես ի բանս
քո, եւ յաղթեսցես ի դատելն քո :

Անօրէնութեամբ յղացայ, եւ ի
մեղս ծնաւ զիս մայր իմ :

Դու Տէ՛ր զճշմարտութիւն սի-

բեցեր, զանյայտու եւ զծածկեալս
իմաստութեամբ քով յայտնեցեր
ինձ :

Յօղեա յիս մշտկաւ, եւ սուրբ
եղեց . լուա, եւ քան զձիւն սպի-
տակ եղեց :

Լսելի արա ինձ, Տէր, զցնծու-
թիւն եւ զուրախութիւն . եւ
ցնծասցեն ոսկերք իմ տառա-
պեալք :

Դարձո զերեսս քո ի մեզաց ի-
մոց . եւ զամենայն անօրէնութիւնս
իմ քաւեա յինեն :

Զաիրտ սուրբ հաստեա յիս,
Աստուած . եւ զհոգի ուղիղ նորո-
գեա ի փորի իմում :

Մի ընկենուր զիս, Տէր, յերե-
սաց քոց . եւ զհոգի քո սուրբ մի
հաներ յինեն :

Տուր ինձ զցնծութիւն փրկու-
թեան . եւ հոգւով պետութեան քո
հաստատեա զիս :

Ուսուցից անօրինաց զճանա-
պարհս քո եւ ամպարիլոք առ քեզ
Դարձին :

Փրկեա զիս յարենէ, Աստուած,

Աստուած վրկութեան իմայ, եւ
ցնծասցէ լեզու իմ յարդարութեան
քում:

Տէ՛ր, Եթէ զըթունս իմ բա-
նաս, բերան իմ երգեցցէ զօրհ-
նութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս
մատուցանէաք. բայց դու ընդ
ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խո-
նարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խո-
նարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա, Տէ՛ր, կամօք քովք
Սիովինի. Եւ շինեսցին պարիսովքն
Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ ոլա-
տարագս արդարութեան, ուխտից
պատարագս հանցեն ի սեղան քո
զուարակս:

ՍԱՂՄՈՍ

ՄԵՐԵԼՍ համար:

Ի խորսց կարդացի առ քեզ, Տէ՛ր,
Տէ՛ր, լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո, ի լսել
զձայն աղօթից իմոց:

թ. և զանօրենութիւնս քննես,
Տէր, Տէ՛ր, ո՛ կարէ կալ առաջի
քո, զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի
Տէր. Համբեր անձն իմ բանի քում,
յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ յե-
րեկոյ, ի պահէ առաւօտու յու-
սացաւ խորայէլ ի Տէր:

Ի տեառնէ է ողորմութիւն բա-
զում. եւ ի նմանէ է փրկութիւն,
եւ նա փրկեաց զիսրայէլ յամենայն
նեղութեանց նորա:

Մազնան+ :

Հոգւոցն հանգուցելոց՝ Քրիստոս
Աստուած արա հանգիստ եւ ողոր-
մութիւն, եւ մեզ մաղաւորացս
շնորհեա զիմողութիւն յանցանաց:

Քարոզ!

Եւ եւս խաղաղութեան զՏէր
աղ: Վասն հոգւոցն հանգուցելոց
աղախեսցուք զփրկիչն մեր Քրիս-
տոս, զի զնոսսա ընդ արդարսն
դասեսցէ, եւ զմեզ կեցուսցէ
8*

շնորհիւ ողորմութեան իւրոյ : Ա-
մենակալ Տէր Աստուած մեր կե-
ցո եւ ող : Տէր ողորմեա : Երից :
Աղօն :

Քրիստոս Որդի Աստուածոյ ան-
ոխակալ եւ ըարեգութ , գլժա
քո արարչական սիրովդ ի հոգիս
հանգուցեալ ծառայից քոց : Յի-
շեա յաւուր մեծի դալստեան ար-
քայութեան քո . արա արժանի
ողորմութեան , քաւութեան եւ
թողութեան մեղաց : Դասաւո-
րեալ պայծառացո ընդ սուրբս
քո յաջակողմեան դասուն : Զի
դու ես Տէր եւ արարիչ ա-
մենեցուն , դատաւոր կենդանեաց
եւ մեռելոց : Եւ քեզ վայելէ փառք,
իշխանութիւն եւ պատիւ . այժմ
եւ միշտ եւ յաւիս :



Stich by J. Kautner Wien

Ս . ՀԱՂԱՐԴՈՒԹԵԱՆ
ՈՒ Ս . ԱՍՏՈՒԾԱԾՆԱՑ
ԱՂՕԹՔՆԵՐ

Տ Ա Ղ

Բաշխման իւմ սուրբ Հաղորդութեան :
Մայր հաւատոյ սուրբ հարսնարան,
Եւ առագաստ գերադրական。
Տուն փեսայիդ անմահական,
Որ զարդարեաց զքեզ անվախ-
ճան :
Երկրորդ երկինք դու հրաշական .
Փառաց ի փառլու բարձրական ,
Որ զմեզ ծնանիս լուսոյ նման .
Աւազանաւն որդիական :
Բաշխես ըզհացըդ մաքրական .
Զարիւնդ ըմազել տաս սոսկական .
Հանես ի վեր գերաստիճան ,
Կմանալեացըն զուգական :
Եկայր որդիք նոր Սիովինի .
Մատիք առ Տէր մեր որլու-
թեամբ .

Ճաշակեցէք եւ աեսէք

Զի քաղցր է Տէր մեր զօրու-
թեամբ :

Կա բաժանեաց ըղթորդանան .

Դու զծով մեղաց աշխարհական .

Նմա Յեսու մեծ զօրական .

Քեզ Տէր Յիսուս Հօր էական :
Հինն օրինակ քեզ է նման ,

Դու խորանին գերադրական .

Կա խորտակեաց զդրունս ան-
դամանդ .

Դու դժոխոց զդրունս ի հիմանց :
Հացս այս մարմին է Քրիստոսի .

Բաժակս արիւն նորոյ ուխտի .

Ծածկեալ խորհուրդըն մեծ
յայտնի .

Աստուած ի սմա մեզ տեսանի :

Աս է Քրիստոս բանն Աստըւած ,

Որ ընդ աջմէ Հօրըն բազմի ,

Եւ աստ ի մեզ պատարագի .

Բառնայ ըղմեղս աշխարհի :

Այն որ օրհնեալ է յաւիտեան .

Հարբ եւ Հոգւովըն միաբան .

Այժմ եւ յաւետ եւ յապագայն ,

Եւ անսպառ միշտ յաւիտեան .

ամէն :

ՃԱՐԱԿԱՆ

Սուրբ Հաղորդութեան :

Իաշխե զմարմին իւր եւ զարիւն .
նոր ուխտ անուանեալ եւ յիշատակ
կամաւոր մահուանն , մերձեցելոցս
ի նա սրբութեամբ :

Որ մարմնով եւ արեամբ քոցու-
ցեր զթողութիւն մեղաց . որ միշտ
պատարագիս ի մեզ անծախալէս .
մաքրեա ի մենջ զմեդ խաւարին
խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ :

Որ քաւիչ զայս նոր ուխտ ցու-
ցեր յետ առաջնոյ քո՝ մահացե-
լոցս ի ճաշակմանէ նախահօրն .
մաքրեա ի մենջ զմեդ խաւարին
խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ :

Որ բարեբանիս յիմանալի
զուարթնոցն՝ հաճեցար մարմնով
պատարագիլ . արա եւ զիս արժանի
աստուածային շնորհիդ :

Որոյ աթոռ քերութե ի վերնա-
տունն բազմեցար , կենարար բա-
ժակաւն զմեզ փրկեցեր . փրկեա
եւ զիս յաւիտենից ի հրոյն :

Որ կազմեցեր սեղանն խորհրդոյ։
Եւ արբուցեր յանմահական բաժա-
կեն սրբոց քոց առաքելոցն այսօր
ի սուրբ վերնատունն։ աղաչեմք
փրկիչ ողորմեա։

Մաքրեա զմիտու եւ զխոր-
հուրդս, զի եւ մէք հաղորդեսցուք
սրբութեամբ ընդ սրբոց քոց ա-
ռաքելոցն այսօր ի սուրբ վերնա-
տունն։ աղաչեմք փրկիչ ողորմեա։

Բանդ Հօր եւ քահանայապետ
ճշմարիտ, որ զաշխարհակեցոյց
զմարմին եւ զարիւնդ քո քաշխեցեր
յառաքեալսն՝ այսօր հաղորդին հո-
ղեղէնք աստուածային խորհրդոյդ։
որդի Աստուածոյ ողորմեա։

Այսօր վերստին նորոգեցաք ի
յանիծից նախահօրն ճաշակելով
զմարմին եւ զարիւն որդւոյն Աս-
տուածոյ։ օրհնեցէք զնա հոգեւոր
երկով։

ԱՆՕԹԻՔ

Սուրբ Հաղորդութեան։

ԵԱՅԼ շուրջ պատեալ ի տարակու-
սանացս յամենայն կողմանց սրաիւ

շաղախետալքս՝ նսլիմք առ քեզ,
 փորձ տկար բնութեանս քահանայ-
 ապէտ Յիսուս։ Ո՞վ որ վասն մեր
 մեղս եղեր, զի մեք լիցուք վասն քո
 արդարութիւն։ Ո՞վ որ վասն մեք
 Երկրաւոր եղեր, զի մեք լիցուք վասն
 քո Երկնաւորք։ Ո՞վ որ վասն մեք
 հաց եղեր, զի մեք ի ճաշակելն
 զքեզ սրբեսցուք։ Տուր զպարա-
 րեալ վշտօք մարմին քո ամենայն
 սրտի սրբարար կերակուր։ Մա-
 տուակեա զարեան քոյ վտակ ան-
 մեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան
 անմեղութեան զմայլումն։ Զգեա
 զփրկական քո զիսաչդ զողելոցս ի
 ծով աշխարհիս առ քեզ վերածիչ։
 Կարօտացաք չնորհի, սփոեա : Լըար
 ի գործոց, քաւեա : Խարիսափեմք
 զիսաւար, ճառագայթեա : Վործա-
 նեցաք ի հաւատոց, հաստատեա :
 Դու ես յոյս, դու ես լոյս, դու
 ես կեանք, դու ես քաւութիւն,
 դու ինքնեւ անմահութիւն։ Քեզ
 սպասեն յեցեալքս ի չնորհս քո :
 Ի քէն կարօտին առնուլ փրկու-
 թիւն խառնեալքս ի մարմինդ քո :

Զքեզ ունին քաւիչ քահանայ
գնեալ արեամբ հօտս քո: Հայեաց
յամենեսեան: Սփռեա զտարակու-
սանս մեր քոյին վաստակովքդ:
ՀանդարաԵցո զխոռվութիւնս մեր
քոյին խաղաղութեամբդ: Հանդո
զաշխատանս մեր ի քոյ օթեւանսդ,
ուր դու գնացեր, ով Տէր, եւ խոս-
տացար: Արժանացո զքոյսս՝ վա-
ստորել զքեզ այդր ընդ Հօր, եւ
ընդ սուրբ Հոգւոյդ յաւիտեանս
ամեն:

ԱՆՕԹԻՔ

ՔՐԻՄՈՒՄ ՀԱՐՀԱՐԱԿԱԿԱՅՐ ԱՅ ԱՆ-
ՀԱՎՈՐԴԱ-ԲԵԱՆ:

Առ քեզ ակնարկեմ, աղքիւր ջրոյ
կենդանւոյ, եւ աղաղակեմ թէ
ընդէր է ինձ սրբութեան ծարաւել,
երբ դու ես իմ սրբութիւն. կամ
ընդէր փափաղիմ մաքրութեան,
մինչ դու ես իմ մաքրութիւն:
Այսուհետեւ ուսեալ եթէ դու
ես իմաստութիւն՝ մեզ յԱստու-
ծոյ տուեալ արդարութիւն եւ
սրբութիւն, առ քեզ ծարաւիմ,

քեզ փափագիմ, քեզ տռփամ,
 տուր իմ ծարաւեալ ողւոյս զքեզ
 զովացումն՝ աղբիւր ջրոյ կենդան-
 ոյ խաղացելոյ ի կեանսդ յաւի-
 տենից : Ծարաւիմ ըմպել ի կըր-
 կին վտակաց կողիդ, որով Եւ
 սրբեալ սիրով քո զմայլիմ : Քաղց-
 նում ուտել զմարմինդ, որով կեն-
 դանացեալ անմահ ես լինիմ : Փա-
 փագիմ ողջագուրել զխոցուած ձե-
 ռացդ, որով հասեալ առ քեզ
 պսակիմ : Տոփամ ակնարկել ըզ-
 դէմսդ, որոյ ապտակաւն ի վիրաց
 իմոց բժշկիմ : Աաղվաղակի լուր
 ինձ, Տէ՛ր, զինուաղեացյինէն հոգի
 իմ : Կուաղեցաւ հոգի իմ ի քո
 անձառդ սիրոյ : Տոչորեցայ յառ
 քեզ տռփանացդ, ով վասն իմ
 խաչեալ : Թալիացայ, յորժամ առ
 քեզ ակնարկեմ, ով վասն իմ ապ-
 տակեալ : Եւ աղաղակեմ, ցոյց
 ինձ զգեմն քո, լսեցո ինձ զբար-
 բառ քո, զի ձայն քո քաղցր է
 եւ զեմք քո գեղեցիկ : Ե՞րբ եկից
 երեւեցայց քեզ : Արդ՝ լուր ինձ,
 եւ արբեցո զիս վաղվաղակի քո

գիտութեամբ եւ սիրով . զի եւ
յինէն՝ որ հաւատամ ի քեզ,
ըղիսեսցեն աղբիւրք ջրոց կենդա-
նութեան :

ԱԴՅԹՔ

Առ ամենասարբ Երբորդունիւն :
* աւատով խոստովանիմ եւ եր-
կիր պագանեմ քեզ , Հայր Եւ Որդի
եւ սուրբ Հոգի , անեղ եւ անմահ
բնութիւն , արարիչ հրեշտակաց եւ
մարդկան եւ ամենայն եղելոց . եւ
ողորմեա քո արարածոցս :

Հաւատով խոստովանիմ եւ եր-
կիր պագանեմ քեզ , անբաժանելի
Ըոյս , միասնական սուրբ Երբոր-
դութիւն եւ մի աստուածութիւն ,
արարիչ լուսոյ եւ Հալածիչ խա-
ւարի . Հալածեա ի Հոգւոյ իման-
գխաւար մեղաց եւ անդիտու-
թեան . եւ լուսաւորեա զմիտս իմ
ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ
ի հաճոյս եւ ընդունել ի քեն
զինդրուածս իմ . եւ ողորմեա ինձ
բազմամեղիս :

Հայր Երկնաւոր Աստուած
Ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ
քո սիրելի ի խնդիր մոլորեալ
ովասրին . մեղայ յԵրկինս եւ ա-
ռաջի քո . ընկալ զիս որպէս զան-
առակ որդին . եւ զգեցո ինձ ըզ-
պատմուճանն զառաջին , զոր մեր-
կացայ մեղօք . եւ ողորմեա քո ա-
բարածոց եւ ինձ բազմամելիս :

Որդի Աստուածոյ Աստուած
Ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայ-
րական ծոցոյ , եւ առեր մարմին
ի սրբոյ կուսէն Մարիամոյ վասն
մերոյ փրկութեան , խաչեցար եւ
թաղեցար եւ յարեար ի մեռե-
լոց , եւ համբարձար առ . **Հայր** .
մեղայ յԵրկինս եւ առաջի քո .
յիշեա զիս որպէս զաւազակին յոր-
ժամ դաս աբքայութեամբ քով .
եւ ողորմեա :

Հոգի Աստուածոյ Աստուած
Ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան
եւ ի վերնատունն . եւ լուսաւո-
րեցեր զիս միբառութեամբ սուրբ
աւազանին . մեղայ յԵրկինս եւ ա-
ռաջի քո . մաքրեա զիս վերստին

աստուածային հրով քով որպէս
հրեղէն լեզուօք զառաքեալոն . Եւ
ողորմեա :

Անեղ բնութիւն , մեղայ քեզ
մտօք իմովք , հոգւով եւ մարմնով
իմով . մի յիշեր զմեղս իմ զառա-
ջինս վասն անուանդ քում սրբոյ .
Եւ ողորմեա :

Տեսնեղ ամենայինի , մեղայ քեզ
խորհրդով , բանիւ . Եւ զործով .
Ծնջեա զձեռագիր յանցանաց իմոց,
Եւ զրեա զանուն իմ ի դպրու-
թեան կենաց . Եւ ողորմեա :

Քննող պազտնեաց , մեղայ
քեզ կամաւ եւ ակամայ , զիտու-
թեամբ եւ անդիտութեամբ . թո-
ղութիւն չնորհեա մեղաւորիս , զի
ի ծննդենեւ աւազանին մինչեւ ցայ-
սօր մեղուցեալ եմ առաջի աս-
տուածութեանդ քո՞ զգայարանօք
իմովք , Եւ ամենայն անդամօք մար-
մեոյս . Եւ ողորմեա :

Ամենախնամ Տեր , զիր պա-
հապան աչաց իմոց զերկիւղ քո
սուրբ ոչ եւս հայել յարատ , Եւ
ականջաց իմոց ոչ ախորժել լսել

զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ ոչ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ ոչ խորհել զշարութիւն, եւ ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց ոչ դնալ ի ճանապարհս անօրէնութեան . այլ ուղղեա զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի . եւ ողորմեա :

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո, զոր արկեր յերկեր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեացէ զախտ հոգոյ իմոյ, եւ սրբեացէ զիսիզն մտաց իմոց, եւ մաքրեացէ զմեզս մարմնոյ իմոյ, եւ վառեացէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա :

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ զործել առաջի քո յամենայն ժամ . ի չար խորհրդոց, ի ըանից եւ ի գործոց փրկեա զիս . եւ ողորմեա :

Կամեցնղ բարեաց Տէր կամաբար, մի թողուր զիս ի կամս ան-

ձին իմոյ զնալ . այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց . եւ ողորմեա :

Արքայ երկնաւոր, առուր ինձ զարքայութիւն քո՝ զօր խոստացար սիրելեաց քոց, եւ զօրացո զսիրա իմ առել զմեղս, եւ սիրել զքեզ միայն, եւ առնել զկամս քո . եւ ողորմեա :

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո զհողի եւ զմարմին իմ ի ողատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց եւ ի մարդոց անիրաւաց, եւ յամենայն վտանգից հոգոյ եւ մարմնոյ . եւ ողորմեա :

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուե եւ ի զիշերի, ի նստել ի տան եւ ի զնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց . եւ ողորմեա :

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ . զու հոգա իւ

պատրաստեա զպէտս հոգւոյ եւ
մարմնոյ իմոյ յայսմշետէ մինչեւ
յաւիտեան . եւ ողորմեա :

Դարձուցիշ մոլորելոց , դարձուց
զիս ի չար սովորութեանց իմոց
ի բարի սովորութիւն , եւ բեւե-
ռեա ի հոգի իմ զսոսկալի օր մա-
հուն եւ զերկիւղ գեհենոյն եւ
զսէր արքայութեան , զի զզջացոյց
ի մեղաց եւ գործեցից զարդա-
րութիւն . եւ ողորմ :

Աղբիւր անմահութեան , աղ-
բերացո ի սրտէ իմմէ զարտասուս
ապաշխարութեան որպէս սկսոնը-
կին . զի լուացից զմեղս անձին ի-
մոյ յառաջ քան զելանելն իմ
յաշխարհէս . եւ ողորմ :

Պարգեւիշ ողորմութեան , պար-
զեւեա ինձ ուղղափառ հաւատով
եւ բարի գործով , եւ սուրբ մար-
մնոյ եւ արեան քո հաղորդու-
թեամբ զալ առ քեզ . եւ ողոր-
մեա :

Բարերայր Տէր , հրեշտակի բար-
ւոյ յանձն արասցես զիս քաղ-
ցրութեամբ աւանդել զհոգի իմ ,

Եւ անխռով անցուցանել ընդ
շարութիւն այսոցն, որք են ի ներ-
քոյ Երկնից . Եւ ողորմ :

Լոյս ճշմարիտ Քրիստոս, ար-
ժանաւորեա զհոգի իմ ուրախու-
թեամբ տեսանել զւյո փառաց
քոց ի կոչման աւուրն, Եւ հանգ-
ՆԵԼ լուսով բարեաց յօթեվանս
արդարոց մինչեւ յօր մեծի դալրս-
տեան քո . Եւ ողորմ :

Դատաւոր արդար, յորժամ
դաս փառօք Հօր դատել զկենդա-
նիս Եւ զմեռեալս, մի մտաներ ի
դատաստան ընդ ծառայի քում,
այլ փրկեա զիս ի յաւիտենական
հրոյն, Եւ լսելի արա ինձ զերա-
նաւեա կոչումն արդարոց յերկնից
արքայութիւնդ . Եւ ողորմեա :

Ամենողորմ Տէր, ողորմեա ա-
մենայն հաւատացելոց ի քեզ,
իմոց Եւ օտարաց, ծանօթից Եւ
անծանօթից, կենդանեաց Եւ մե-
ռելոց շնորհեա Եւ թշնամեաց ի-
մոց Եւ ատելեաց զթողութիւն, որ
առ իս յանցանաց, Եւ դարձո
զնոսա ի չարեացն զոր ունին վասն

իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին . եւ ողորմեա :

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաշանս ծառայիս քո . եւ կատարեա ի բարի զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, եւ Յովհաննու մկրտչին, եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, եւ սրբոց առաքելոց եւ մարգարեից եւ վարդապետաց եւ մարտիրոսաց եւ սրբոց հայրապետաց եւ ճգնաւորաց եւ կուսանաց եւ ամենայն սրբոց քոյ Երկնաւորաց եւ Երկրաւորաց : Եւ քեզ փառք եւ Երկրապետութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԱՆՕԹԻՔ

Առ սուրբ իոյս Աստվածածինը :

Եւ արդ՝ ի վերայ այսքանեաց յլուսահատութեանց եւ ահարկու սրտարեկութեանց, պակուցանո-

Դական սաստկութեան, աստուածային բարկութեանց, տագնապեալ հոգւով թախծութեան իսպառ, աղաշեմ զքեզ, սուրբ Աստուածածին: Հրեշտակի ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովլէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, եղեմ շնչական, ծառ կենացն անմեհից բոցեղէն սրովն պարունակեալ, ի բարձրեալն Հօրէ զօրացեալ եւ հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարդարեալ եւ տաղաւարեալ: Միածինն Հօր եւ քեզ անդրանիկ, որդի քո ծնրնդեամբ եւ տէր արարչութեամբ. ընդ անաղու մաքրութեանդ եւ անբիծ բարի, ընդ անարատ սրբութեանդ եւ խնամակալ բարեխօս: Ընկալ զմաղթանս այսր աղերսա-

նաց քում դաւանողիս, եւ մատո
ընծայեա ընդ նմին խառնեալ
զրանն իմ նախնի մեծիդ ներբողի
ի քոյդ պաղատանս . Հիւսեա մի-
ացո զմեղուցելոյս դառն հեծու-
թիւն ընդ քումդ երջանիկ եւ
խնկաւորեալ հայցուածոց , տունկդ
կենաց պաղոյն օրհնութեան . զի
ի քեն միշտ օգնեալ եւ բարեգոր-
ծեալ , եւ ի մարրական քո ծնե-
լութիւնդ ապաւինեալ եւ լուսա-
ւորեալ , կեցից Քրիստոսի որդւոյ
քո եւ տեառն :

Օժանդակեա թեւոցդ աղօթիւք,
խոստովանեալ մայրդ կենդանեաց,
եւ յելիցն իմ յերկրէս հովտէ ,
առանց լվկանաց հետեւել ի կեանս
օթեւանացդ պատրաստութեան .
զի թեթեւացի կատարածն իմ
ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ :
Արացես տօն ինձ բերկրութեան
զօրն իմ տագնապի , ողջացուցիչ
երկանցն Եւսյի . բարեխօսեա ,
խնդրեա , աղաշեա , զի ըստ անձա-
ռելի մաքրութեանդ եւ ահա զբա-
նիդ հաւատամ զընդունելութիւն :

Արտասուօք օգնեա վտանդեցելոյս,
 զովեալդ ի կանայս . ծունը խո-
 նարհեցո առ իմ հաշտութիւն ,
 ծնողդ Աստուծոյ . ընդ իմում
 թշուառիս հոգա , խորան բարձրե-
 լոյն . ձեռն տուր անկելոյս , տա-
 ճար երկնային . փառաւորեա զոր-
 դիդ քո ի քեզ՝ աստուածօրէն ինձ
 հրաշագործել քաւութիւն եւ ո-
 ղորմութիւն , աղախին աստուծոյ եւ
 մայր . բարձրասցի պատիւ քո ինեւ
 եւ ցուցցի փրկութիւն իմ քեւ :
 Եթէ զիս գտցես , Տիրամայր .
 Թէ ինձ ողորմեսցիս , Արքուհի .
 Թէ զկորուսեալս շահեսցիս , անա-
 բատ . Թէ զհարթուցեալս յանձնան-
 ձեսցես , երջանիկ . Թէ զամաշե-
 ցեալս յառաջ մատուսցես , բա-
 րեշնորհ . Թէ յուսահատելոյս ինձ
 միջնորդեսցես , միշտ սուրբ կոյս .
 Թէ զմերժեալս ընտանեցուսցես ,
 մեծարեալդ յԱստուծոյ . Թէ յիս
 ցուցցես զգթածութիւն , լուծիչդ
 անիծից . Թէ զծփեալս հաստա-
 տեսցես , հանգիստ . Թէ ի խռովու-
 թեանցս յուզմանց փոխեսցես զիս ,

Խաղաղաբար . թէ վրիսելոյս ինձ
 հնարաւորեսցես , գովեալ . թէ
 վասն իմ մոցես ի հանգես , մա-
 հունահանջիչ . թէ զդառնութիւնս
 իմ անուշեսցես , քաղցրութիւն .
 թէ զբաժանման իմ խորոց քակ-
 տեսցես , հաշտութիւն . թէ զան-
 մաբրութիւնս իմ բարձցես , եղծ-
 ման ընդուանիչ . թէ զմատնեալս
 մահու փրկեսցես , կենդանի լոյս .
 թէ զլալեացս ձայն հատցես , բեր-
 կրութիւն . թէ զխորտակեալս
 կաղղուրեսցես , դեղ կենաց . թէ ի
 կործանեալս յիս ակնարկեսցես ,
 հոգելից . թէ ողորմութեամբ ինձ
 պատահեսցես , կտակ նուիրեալ :
 Օրհնեալ միայն ի շրթունս ամբիծս
 լեզուաց երջանկաց , ահա՛ կաթիւ
 մի կաթին քումի կուսութեան
 յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ
 զօրէ , մայրդ բարձրելոյ տեսոն
 Յիսուսի արարչին երկնի եւ բնաւին
 երկրի , զոր անձառապէս ծնար բո-
 վանդակ մարմնովն եւ համայն աս-
 տուածութեամբն , որ փառաւո-
 րեալ է ընդ Հօր , եւ Հոգւոյն

սրբոյ էութեամբ եւ անքննութեամբ մերոյին ընութեամբս միացելով, յամենային եւ յամենայնում, մի Երրորդութենէն. նմա վառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ

ԱՌ ՍԱՐԻԲ ԽՈՅ ԱԿՊԱԿԱԴԱՇԻՆԸ:

Վայր սուրբ սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր, եւ ցընծութիւն աշխարհի ծնար զԲանն Աստուած աղաչեմք: Վայր սուրբ բարեխօսեա:

Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, որ խոնարհեցաւ ի Հայրական ծոցոյ, էառ մարմին ըստ մարդկային ընութեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս, եւ յերկրի. աղա:

Աղաչեա: Կերել մեզ՝ անտես առնել զանցանս մեր, եւ տալ օգնականութիւն ընդդիմուկաց լինել Հակառակամարտիցն ի պատերազմի. աղա:

Աղաչեա : Զի լռեսցեն պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, անկեսցի սէրեւ արդարութիւն ի յերկրի . աղա :

Աղաչեա : Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց, զառատ սլողաբերութիւն բուսոց եւ տնկոց՝ առ ի զուարձալի լինել ամենայն հարկաւոր սլիտոյից մերոց . աղա :

Աղաչեա : Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ՝ լինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարդարէից՝ պահէլ անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ . աղա :

Աղաչեա վասն մեր Սրբուհի զմիածին քո զԱրդին : Եւ վասն հոգւոցն հանգուցելոց ընդունել յարքայութիւնն երկնից եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն . աղա :

Յիշեա տէր եւ ողորմեա :

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք :

Տուր մեզ, Տէր Աստուած մեր :

Չանձինս մեր եւ զմբմանս
տեառն Աստուծոյ ամենակալին
յանձն արասցուք :

Քեզ տեառնդ յանձն եղիցուք :

Ողորմեաց մեզ, տեր Աստուծ
մեր, ըստ մեծի ողորմութեան քում,
ասասցուք ամենեքեան միաբանու-
թեամբ :

Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Մայր սուրբ բարեխօսեա առ Տէր
վասն մեր :

Ե Բ Գ

Մարիամն Ասպաւածածնին :

Վեծացուսցե անձն իմ զՏէր . եւ
ցնծասցե հոգի իմ Աստուծով
փրկչաւ իմով :

Այց արար ի վերայ խոնարհու-
թեան աղախնոյ իւրոյ . այսուհե-
տեւ երանիցեն ինձ ամենայն ազգք :

Արար ընդ իս մեծամեծս Հզօրն .
եւ սուրբ է անուն նորա :

Ողորմութիւն արար յազդաց
յազդս երկիւղածաց իւրոց . եւ
արար զզօրութիւն բազկաւ իւրով :

Յրուեաց զամբարտաւանս ի
մտաց սրտից, եւ քակեաց զհզօրս
յաթռռոց:

Չիսնարհս բարձրացոյց: զկա-
րօսս ելից բարութեամբ. եւ զմե-
ծառունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Խորայէլի ծա-
ռայի իւրոյ. յիշելով զողորմու-
թիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարս
մեր, ընդ Արքահամու եւ զաւակի
նորա յաւիտեան:

Ը Ա Ր Ա Կ Ա Ն

Ի քեզ եմք ապաւինեալ:
Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ:
Որ քան զերկինս բարձրագոյն Մա-
րիամ, աւարձանիք եկեղեցւոյ, Քրիս-
տոսի մայր Աստուծոյ մերոյ: Որ
քան զարեգակն ալայծառադոյն Մա-
րիամ, մի դադարեր բարեխօսել
վասն մեր, Քրիստոսի մայր Աստու-
ծոյ մերոյ:

Բարեխօսեա անդադար առ որ-
դիդ քո եւ Աստուծ մեր, Ճնո՞ղ
եւ աղախին Տեառն: Ի բարեխօ-

սութիւն փութացիր մեզ, սուրբ
Աստուածածին, առ ի փրկել զժո-
ղովուրդս ի մեղաց եւ յապականու-
թենէ: Ապաւինիմք ի քո բարե-
խօսութիւնդ, աստուածածին Մա-
րիամ, մայր Տեառն եւ կոյս սուրբ,
Հարսն Երկնից եւ դուռն կնքեալ,
զոր մարդարէն ետես:

Մաղթան+ :

Վասն սրբուհւոյ անարատ մօր
քո եւ կուսի, Տէր, ընկալ զաղա-
շանս մեր, եւ կեցս զմեզ:

Քարսով:

Սուրբ զԱստուածածինն եւ զա-
մենայն սուրբս բարեխօս արասցուք
առ. Հայր ի յերկինս, զի կամեցեալ
ողորմեսցի եւ զժացեալ կեցուսցէ
զարարածս իւր: Ամենակալ տէր
Աստուած մեր:

Աղօն+ :

Ընկալ, Տէր, զաղաչանս, մեր բա-
րեխօսութեամբ սուրբ Աստուա-
ծածինն անարատ ծնողի միածնի
Որդւոյ քո, եւ աղաշանօք ամե-
նայն սրբոց քոց: Լուր մեզ, Տէր, եւ

ողորմեա, ներեա, քաւեա եւ [Ժող
զմեղս մեր: Արժանաւորեա զոհու-
թեամբ փառաւորել զքեզ ընդ
Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյտ:
այժմ եւ միշտ:

Զհանգստեան զաղօթս եւ զա-
ղաչանս ընկալ, մարդասէ՛ր Աս-
տուած, ի հաճոյս բարերար կամաց
քոց, եւ մեր մեղաց եւ բազում
յանցանացն [Ժողութիւն լնորհեա:
Եւ քեզ փառք յաւիտեանս. ամեն:

Փառք քեզ, Տէ՛ր Աստուած, որ
պարգևեցեր զօրս բարեաւ եւ
խաղաղութեամբ անցուցանել:
Մարդասէ՛ր Աստուած, զառաջակայ
գիշերս՝ որ ի վերայ մեր զալոց է,
ի մեղաց փրկեա, ի չարեաց ազա-
տեա, ի զործս բարիս առաջնոր-
դեա: Առաւօտու օրհնութեանցն
եւ փառաբանութեացն արժանի
արա զամենայն հաւատացեալս ա-
նուանդ քում սրբոյ, եւ պահեա
ի խաղաղութեան:

Տէ՛ր Աստուած մեր, տուր զքո-
իաղաղութիւնդ ամենայն աշխար-

Հի. բարձ զցասումն եւ զպատու-
հան ի յարարածոց։ Ողորմեա
հարց եւ եղբարց մերոց կենդա-
նեաց եւ հանգուցելոց։ Ողորմեա
զեկեղեցի շինողաց, երախտաւո-
րաց, պազատուից, սպասաւորաց,
եւ այնոցիկ՝ որբ ընդ հօվանեաւ
ուորբ տաճարիս Են հանգուցեալ։

Տէր Աստուած, օդնեա թագաւ-
որաց քրիստոնէից եւ իշխանացն
բարեսլաշտից։ զօրաց եւ զաւա-
կաց նոցին՝ պահելով ի խաղաղու-
թեան։

Տէր Աստուած մեր, պահեա
զառաջնորդս եւ զեղբայրութիւնս
մեր ամբողջ եւ անխոռվ ի կամս
ողորմութեան քո։

Նշանաւ ուորբ եւ պատուա-
կան խաչիւ քո հալածեա զերե-
ւելի եւ զաներեւոյթ թշնամին ի
սահմանաց մերոց եւ ի բնակու-
թենէս մերմ։ Փրկեա զմեզ ի հրոյն
յաւիտենից։ Եւ քեզ փառք յա-
փառեանս։ ամէն։




ՑԱՆԿ ԱԴՕԹԻՑ

Առաջային աղօթիներ	9
Իրիւուան աղօթիներ	34
Խսուփավանակնեան աղօթիներ . .	41
Սրբութեան աղօթիներ	47
Պատարագի աղօթիներ	55
Մաղթան + առ սրբուհի իոյա Առ- դապահածքնել	62
Զանազան աղօթիներ	67
Զանազան սուրբերուան աղօթիներ	79
Մահաւան պատրաստութեան, ա- ղաշխարհակնեան առ մետելց աղօթիներ	101
Ս. Հազարդակնեան առ Ս. Առ- դապահածքնայ աղօթիներ . . .	119



81
92

1903.10.18



Ի Վ Ե Ւ Ա

Ի Վ Ե Ւ Ա · Ս Ա Ս Ո Ւ Ա Շ Ա Խ Ա

1849

